

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Դաստիարակության
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
20.02.2014 թ. թիվ 34Ա որոշմամբ

ԳԱԶԻ հաշվետվություն

Դրամավարկային
քաղաքականության ծրագիր.
1-ին եռամյակ, 2014



Դրամավարկային քաղաքականության
2013 թ. 4-րդ եռամյակի
ծրագրի կատարման
հաշվետվություն

Բովանդակություն

1. Նամառոտագիր	5
2. Կանխատեսում, դրա փոփոխությունները և ռիսկեր	8
 2.1. Արտաքին միջավայր	8
 2.2. Նամախառն առաջարկ և համախառն պահանջարկ	9
 2.3. Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող երեք տարվա հորիզոնում	15
3. 2013 թվականի չորրորդ եռամայակի փաստացի զարգացումները	18
 3.1. Գնաճ	18
 3.1.1. Փաստացի գնաճ և գնաճի նպատակի իրագործում	18
 3.1.2. Ներմուծման գներ և արտադրողների գներ	20
 3.1.3. Գնաճի և սուլուսադրությի սպասումներ	21
 3.2. Նամախառն առաջարկ և համախառն պահանջարկ	22
 3.2.1. Նամախառն առաջարկ	22
 3.2.2. Նամախառն պահանջարկ	24
 3.2.3. Աշխատանքի շուկա	25
 3.2.4. Նարկաբյուջետային քաղաքականություն	26
 3.3. Փող և ֆինանսական շուկայի զարգացումները	27
 3.3.1. Ֆինանսական շուկա, փող և վարկ	27
 3.3.2. Փոխարժեք	31
 3.4. Վճարային հաշվեկշիռ	32
 3.4.1. Ընթացիկ հաշիվ	33
 3.4.2. Կապիտալի և ֆինանսական հաշիվ	34
 3.5. Արտաքին միջավայր	34
4. Ամփոփում	36

2006 թվականի հունվարից ՀՀ կենտրոնական բանկն անցում է կատարել գնածի նպատակադրման ռազմավարությանը: Այս ռազմավարության ներքո էապես կարևորվում է ԿԲ հաղորդակցությունը հասարակության հետ, որի հիմնական ուղիներից մեկը Գնածի եռամսյակային հաշվետվությունների հրապարակումն է: Գնածի հաշվետվության առաջին բաժինը ներառում է հաջորդ եռամսյակի Դրամավարկային քաղաքականության ծրագիրը, որը ներկայացնում է գնածի և մակրոտեսական նյութ ցուցանիշների եռամսյակային նոր կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները կանխատեսվող հորիզոնում: Երկրորդ բաժինը ներառում է նախորդ եռամսյակի՝ գնածի հրագործման ուղղված դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը, որը ներկայացնում է տնտեսական և դրամավարկային փաստացի զարգացումները:

Գնածի նպատակային ցուցանիշին գուգահեռ գնածի կանխատեսման և դրա հիմքում ընկած ենթադրությունների հրապարակումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը դարձնում է առավել թափանցիկ, հասկանալի և կանխատեսելի, որը էականորեն բարձրացնում է Կենտրոնական բանկի հանդեպ հասարակության վստահությունը: ՀՀ կենտրոնական բանկը համոզված է, որ հասարակության համար հասկանալի ու վստահելի դրամավարկային քաղաքականությունը արդյունավետ ներգործություն ունի գնաճային սպասումների խարսխման և գնածի կայունության ապահովման ծախսերի նվազեցման առումով:

Գնածի նպատակադրման ռազմավարության հրականացման ներքո ԿԲ-ն 2012 թ-ից հրապարակում է ոչ պայմանական գնածի կանխատեսումը 3 տարվա հորիզոնում, որի ընթացքում դրամավարկային քաղաքականությունն ուղղվում է նպատակային 4% ցուցանիշից ապագա գնածի շեղումները նվազագույնի հասցնելուն: Սույն հաշվետվության կանխատեսումների համար հիմք են ծառայել մինչև վերաֆինանսավորման տոկոսադրույթի հաստատման օրը՝ 2014 թ. փետրվարի 11-ը առկա փաստացի տեղեկատվությունը, Կենտրոնական բանկի կողմից կատարված հարցման արդյունքները և մակրոտեսական ապագա զարգացումների վերաբերյալ եղած տեղեկատվության հիման վրա արված դատողությունները:

Մինչ օրս հրապարակված բոլոր «Գնածի հաշվետվությունները» հասանելի են ՀՀ կենտրոնական բանկի տնային էջում, որտեղ գետեղված են նաև դրամավարկային քաղաքականությանն առնչվող այլ հրապարակումներ:

1. ՀԱՍԱՌՈՏԱԳԻՐ¹

Կարծաժամկետ հասլաքում 12-ամյա գնաճը կշարունակի նվազել մինչև տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանը:

ՀՀ ԿԲ կանխատեսումների համաձայն՝ կարծաժամկետ հատվածում 12-ամյա գնաճը կշարունակի նվազել մինչև տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանը՝ 2014 թ. վերջից մոտենալով նպատակային ցուցանիշին և միջնաժամկետում տատանվելով դրա շուրջ, իսկ տնտեսական աճը կարագանա 2014 թ. և կկայունանա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակում:

2013 թ. չորրորդ եռամսյակում տնտեսական ակտիվությունը որոշ չափով վերականգնվել է և զգալի մեղմվել գնաճային միջավայրը, այդուհանդերձ, **տնտեսական աճը** սպասվածից ցածր է եղել, իսկ **12-ամյա գնաճը գտնվել է** տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին մոտ: 2013 թ. ծնավորված մակրոտնտեսական միջավայրը բնութագրվել է մի շարք առանձնահատկություններով: Այսպես տարեսկզբից արձանագրվել է **տնտեսական աճի տեմպերի շարունական դանդաղում՝** հիմնականում պայմանավորված շինարարության ճյուղի անկանոնք, եներգակիրների սակագների բաձրացմանք և տարեսկզբից իրականացված զապողական հարկաբյուջետային քաղաքականությանք: Միևնույն ժամանակ, մինչև մայիս համեմատաբար կայուն վարքագծից հետո, **գնաճային միջավայրը զգալի ընդլայնվել է՝** հիմնականում պայմանավորված եներգակիրների սակագների բաձրացման ուղղակի և երկրորդային ազդեցություններով (ընդհանուր առմանք՝ շուրջ 3.0 տոկոսային կետ) և վատ բնակչինական պայմանների հետևանքով ծնավորված գնաճային սպասումներով: Գնաճը կրկին նվազել է սեպտեմբերից սկսած, երբ, պահպանվող ցածր տնտեսական ակտիվության և զապողական հարկաբյուջետային քաղաքականության պարագայում, ԿԲ կողմից դրամավարկային պայմանների խստացումը որոշակիորեն մեղմել են գնաճային սպասումները: Տարվա արդյունքներով՝ **12-ամյա գնաճը կազմել է 5.6%**, գրեթե համընկելով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին: 2013 թ. նմանատիպ վարքագիծ է ցուցաբերել բնականոն գնաճը, որի 12-ամյա ցուցանիշը տարեսկզբի 3.5%-ից օգոստոսին հասել է 5.7%-ի, իսկ այնուհետև՝ մինչև տարեվերջ նվազել կազմելով 3.7%:


2013 թ. չորրորդ եռամսյակում պահպանվել է մասնավոր սպառման ցածր աճի տեմպը, ինչի պարագայում հունվար-դեկտեմբերին մասնավոր սպառման աճը գնահատվում է տ/տ 1.8%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9%-ի փոխարեն: Չորրորդ եռամսյակում ներդրումային միջավայրը սպասվածից ավելի թույլ է եղել՝ առավելապես պայմանավորված շինարարության ճյուղում ներդրումների նվազմանք, որի հետևանքով դեկտեմբերի վերջի դրությանք գնահատվում է մասնավոր ներդրումների տ/տ 13.1% նվազում՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 3.0% նվազման փոխարեն: Արդյունքում՝ ակնկալվում է, որ 2013 թվականի հունվար-դեկտեմբերի տնտեսական աճը կլինի 3.3-3.6% միջակայքում:

Կարծաժամկետ կանխատեսումների համաձայն՝ մասնավոր սպառման աճը 2014 թ. կկազմի 5.3%, մասնավոր ներդրումները կավելանան 3.9%-ով, իսկ տարվա ընթացքում նախատեսվող ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում հարկաբյուջետային ազդակը գնահատվում է 1.5 տոկոսային կետ ընդլայնող: 2014 թ. արդյունքներով՝ ապրանքների և ծառայությունների արտահանման իրական աճը կկազմի 11-13%, ներմուծման իրական

¹ Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման հիմքում ՀՀ ԱԿԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին» (2014 թ. հունվարի 31-ի դրությամբ) հրապարակումն է:


Տնտեսական աճը 2014 թ. գնահատվում է 5.4-6.1%:

ԴՆԱ իրական աճի (կուտակային) կամխատեսման հավանականությունների բաշխումը 3 տարվա կամխատեսման հորիզոնում



ԿԲ կամխատեսումների համաձայն՝ 2014 թ. գնաճը շարունակելու և նվազել և գնահատվում է, որ կտառամի 2.5-5.5% միջակարում:

Գնաճի (12-ամյա) կամխատեսման հավանականությունների բաշխումն գրաֆիկով 3 տարվա կամխատեսման հորիզոնում



աճը՝ 3-5%, իսկ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների աճի տեմպը՝ 7-9%: Արդյունքում՝ **տնտեսական աճը 2014 թ. գնահատվում է 5.4-6.1%**, իհմնականում պայմանավորված արդյունաբերության և ծառայության ճյուղերի աճով (Ընդհանուր նպաստում՝ մոտ 3.5 տոկոսային կետ): **Կամխատեսվող հորիզոնում** տնտեսական աճը կկայունանալ 5-6% շրջանակներում և մոտ կգտնվի իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին՝ պայմանավորվելով մասնավոր սպառման աճի տեմպերի կայունացմամբ և մասնավոր ներդրումների դանդաղ տեմպերով վերականգնմանը: Այսպիսով՝ **կամխատեսվող հորիզոնում** մասնավոր պահանջարկի կայունացման և հարկարյութետային քաղաքականության չեզոք ազդեցության արդյունքում՝ **ներքին պահանջարկի առումով** ակնկալվում է ոչ գնաճային ազդեցություն:

2013 թվականի չորրորդ եռամյակում **արտաքին պահանջարկը շարունակել** է ցածր մնալ՝ առավելապես պայմանավորված զարգացող երկրների տնտեսությունների զարգացումներով: Այս իրավիճակում ինչպես **հիմնական հոլմքային, այնպես էլ պարենային ապրանքների միջազգային շուկաներում** պահպանվել է ոչ գնաճային միջավայր:

Կամխատեսվող հորիզոնում ակնկալվում է համաշխարհային տնտեսական աճի տեմպերի դանդաղ վերականգնում, որի պայմաններում իհմնական հոլմքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներից եական գնաճային ճնշումներ չեն սպասվում:

2013 թ. չորրորդ եռամյակում, ինչպես արդեն նշվել է, **12-ամյա գնաճը** դրսևորել է նվազողական վարչագիծ՝ տարեվերջին ընդունակ մոտենալով իր տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանագծին: Այս պարագայում, հաշվի առնելով կարճաժամկետ հատվածում արտաքին և ներքին տնտեսություններից շուրջորդ եռամյակում արդեն խարսխված լինելու հանգամանքը, կենտրոնական բանկը տարեվերջին թուլացրել է **դրամավարկային պայմանները՝ իշեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույթը 0.75 տոկոսային կետով և դեկտեմբերի վերջին սահմանելով 7.75% (մանրանասն երկայացված է «3.1.1. Փաստացի գնաճ և գնաճի նպատակի իրագործում» բաժնում):**

ԿԲ կամխատեսումների համաձայն՝ 2014 թ. գնաճը շարունակելու և նվազել և գնահատվում է, որ տարվա երրորդ եռամյակում կլինի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանին մոտ՝ պայմանավորված 2013 թվականի հուլիսից ենթօքակիրների սակագների բարձրացման ազդեցության չեզոքացմամբ: Տարեվերջին 12-ամյա գնաճը կկայունանալ նպատակային ցուցանիշի շրջակայքում, ինչը տեղի կունենա հիմնականում դրամավարկային պայմանների թուլացման լազարին ազդեցությամբ ու ընդլայնողական հարկարյութետային քաղաքականության արդյունքում, իսկ **կամխատեսվող հորիզոնում կտառամի նպատակային ցուցանիշի շուրջ: Այդ իրավիճակում **2014 թ. առաջին եռամյակում ԿԲ-ն կշարունակի թուլացմել դրամավարկային պայմանները՝ արծագանքելով դեռևս պահպանվող ցածր տնտեսական ակտիվության ու գնաճային միջավայրի մեղմնամք:** Դրամավարկային պայմանների թուլացման համատեքստում ԿԲ-ն նաև դրոշում է կայացրել տարեսկզբից նվազեցնել դրամով պարտադիր պահուստավորման 4% սահմանաչափը մինչև 2%:**

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունները մեծապես կայայնավորվեն արտաքին ու ներքին տնտեսական զարգացման առկա անորոշությունների դրսևորումներով


(մանրամասն ներկայացված է «2.3. Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող երեք տարվա հորիզոնում» բաժնում):

Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում գնահատվում են հավասարակշռված: Ընդ որում, հիմնական ռիսկերը կապված են զարգացող երկրների տնտեսական զարգացումների հեռանկարների և ներքին պահանջարկի փոփոխությունների հետ, որոնց արդյունքում գնաճի կանխատեսված արժեքի շուրջ անորոշությունները պահպանվում են: Նման ռիսկերի դրսևորման պարագայում Կենտրոնական բանկը կարձագանքի համապատասխան քաղաքականությամբ՝ միջինժամկետ հատվածում ապահովելով գնաճի նպատակային նակարդակը:

2. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐ

2.1. Արտաքին միջավայր²

Կամխատեսվող հորիզոնում համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում արտաքին հատվածում կրացակային գնաճային մշումները:



Համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում արտաքին հատվածում կրացակային գնաճային ճնշումները:

2014 թ. սկզբին ԱՄՆ վերանայել է համաշխարհային տնտեսական աճի հեռանկարը՝ 2014 թ. համար կանխատելով 3.7% տնտեսական աճ (աճի ուղղությամբ ճշգրտումը կազմել է 0.1 տոկոսային կետ), ընդ որում ճշգրտումը կատարվել է բացառապես զարգացած երկրների հաշվին:

ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի կողմից հրականացվող ցածր տոկոսադրույքների քաղաքականությունը, չնայած քանակական ընդլայնման ծրագրի ծավալային ցուցանիշների կրծատմանը, կպահպանվի նաև 2014 թ-ին: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության հետ կապված անորոշությունների մեջնունը կնայատի տնտեսական աճի տեմպերի հետագա արագացմանը: Արդյունքում՝ տնտեսական աճը 2014 թ. գնահատվում է մոտ 2.6%, 2016 թ.՝ 2.9%:

Եվրոգույնում 2013 թ. վերջից սկսված տնտեսական ակտիվության վերականգնումը կշարունակվի նաև 2014 թ-ին, և տնտեսական աճը 2016 թ. կկազմի մոտ 1.3%: Միաժամանակ, տնտեսության խթանման նպատակով, Եվրոպական կենտրոնական բանկը կշարունակի ցածր տոկոսադրույքների քաղաքականությունը:

Ռուսաստանի տնտեսական աճի կանխատեսումը միջնաժամկետ հատվածում վերանայվել է նվազման ուղղությամբ: Տնտեսական աճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ներդրումների կրծատմամբ և վերջինիս հետ կապված՝ տնտեսության տարրեր ճյուղերում ակտիվության նվազմամբ: Աճի տեմպը 2014 թվականին գնահատվում է մոտ 2.2%, 2016-ին՝ 3%:

Համաշխարհային տնտեսության զարգացման հետագա ընթացքի վերաբերյալ **անորոշությունները և ռիսկերը առավել նշանակալի են** զարգացող երկրների համար: Վերջիններս պայմանավորված են զարգացող երկրներից կապիտալի արտահոսքով և դրա հետ կապված՝ տնտեսական աճի դանդաղմանը:

Սպասվող համաշխարհային տնտեսական աճի դանդաղ վերականգնման պայմաններում հիմնական **հոլմքային և պարենային ապրանքների** շուկաներում էական գնաճային միտումներ չեն սպասվում: 2013/2014 մարզերին պայմանավորված տարում կանխատեսվող առատ բերքով պայմանավորված, կարծաժամկետ հատվածում կարծանագովեն պարենային ապրանքների միջազգային գների գնանկումնային միտումները: Միաժամանակ, առանձին ապրանքների շուկաների զարգացումները կապահանավորվեն դրանց հաստուկ հիմնարարներով: Այսպես էներգակիրների գնային զարգացումների հետ կապված ռիսկերը պայմանավորված կլինեն աշխարհաքաղաքական զարգացումներով, իսկ պարենային ապրանքների գները՝ հիմնականում եղանակային պայմաններով:

² Արտաքին միջավայրի կամխատեսումների համար հիմք է Ժառայել՝ IMF, World Bank, The Economist, Global Insight, Financial Times, US Department of Agriculture, Economist Intelligence Unit, International Grain Council, International Energy Agency, Barclays Capital, RosBusinessConsulting և այլ աղյուսների տեղեկասպառյունը:

Ապրանքային շուկաների զարգացումները կանխատեսվող հորիզոնում

Էներգիայի միջազգային գործակալության հունվարի գնահատումների համաձայն՝ 2014 թ. նավթի համաշխարհային պահանջարկի շուրջ 61%-ը կրավարարվի ՕՊԵԿ անդամ չհանդիսացող երկրների կողմից նաև արդյունահանմամբ (նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 3.1%), որի պայմաններում ՕՊԵԿ անդամ երկրների կողմից արդյունահանման ծավալների նկատմամբ միջին պահանջարկը կկազմի 36.1 մլն բարել/օրական: 2014-2016 թթ., համաշխարհային տնտեսության վերականգնմանը զուգընթաց, հիմնականում կդրսնորեն նավթի միջազգային գների չափավոր աճի միտումներ: Թեև աշխարհաբարձրական զարգացումներով պայմանավորված ռիսկերը որոշակիորեն նվազել են, սակայն էներգակիրների միջազգային շուկայում վերջիններիս հետ կապված գնաճային ռիսկերը կպահպանվեն:

2014-2016 թթ., համաշխարհային տնտեսության վերականգնման պարագայում, արդյունաբերական մետաղների շուկաներում կմկատվեն չափավոր գնաճային դրսնորումներ:

Համաձայն ԱԱՆ գյուղեպարտամենտի կողմից հունվարին կատարված գնահատումներ՝ 2013/2014 մարտերին գայթեային տարում սպասվում է մոտ 712.7 մլն տոննա ցորենի բերք (նախորդ տարվա համեմատ արտադրության ծավալն ավելացել է մոտ 56.3 մլն տոննայով), ընդ որում սպասման նկատմամբ արտադրության առաջնացիկ աճով պայմանավորված՝ կանխատեսվող միջազգային ակնկալվում է պաշարների ծավալի ած (նախորդ տարվա համեմատ պաշարները կավելանան 9.3 մլն տոննայով): Չնայած 2013 թ. վերջին և 2014 թ. սկզբին գրանցած գնաճկումներին, միջնաժամկետ հատվածում հիմնականում կդրսնորվեն հացահատիկի միջազգային գների կայունացման միտումներ:

2013/2014 մարտերին գայթեային տարում բրնձի համաշխարհային արտադրության ծավալը կկազմի 471.2 մլն տոննա (նախորդ տարվա համեմատ՝ մոտ 1.7 մլն տոննայով ավելի): Միաժամանակ, սպասման աճով պայմանավորված, ակնկալվում է պաշարների նվազում (նախորդ տարվա համեմատ պաշարները կնվազեն մոտ 2 մլն տոննայով): Արդյունքում՝ հիմնականում կդրսնորեն բրնձի միջազգային գների կայունացման միտումներ:

2013/2014 մարտերին գայթեային տարում կանխատեսվող առատ բերքով պայմանավորված՝ կարծամակետ հատվածում կարծամագրվեն շաբառավագի միջազգային գնի նվազման միտումներ: Այդուհանդերձ, միջնաժամկետ հատվածում հիմնականում ակնկալվում է գների կայունացման վարքագիծ:

2.2. Համախառն առաջարկ և համախառն պահանջարկ

Համախառն առաջարկ

2014 թվականի առաջին եռամյակում կատարված կանխատեսումները էականորեն չեն տարբերվել 2013 թվականի չորրորդ եռամյակի կանխատեսումներից, քանի որ նակրոտնտեսական զարգացումները հիմնականում պահպանվել են կանխատեսվածին համապատասխան: Արդյունքում՝ 2014 թվականին տնտեսական ակտիվության աստիճանական արագացմամբ պայմանավորված՝ հունվարինեւնբեր ժամանակահատվածի տնտեսական աճը կկազմի տ/տ 5.4-6.1%³, իսկ կանխատեսվող հորիզոնում կկայունանա 5-6% միջա-

³ 2014 թվականին տնտեսական ակտիվության աստիճանական արագացմամբ պայմանավորված՝ տնտեսական աճը կկազմի տ/տ 5.4-6.1%:

³ Տես ՀՆԱ իրական աճի (կուտակային) կանխատեսման հավաճականությունների բաշխման գծանկարի 30% հավաճականության միջակայքը:

կայքում՝ մոտ գտնվելով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

Տնտեսության ճյուղերում ակնկալվում են հետևյալ զարգացումները.

Արդյունաբերությամբ ճյուղում 2014 թվականին կանխատեսվում է ավելացված արժեքի շուրջ 6-8% աճ, որին հիմնականում կնպաստեն համաշխարհային շուկաներում գումարվող մետաղների գների ներկայիս մակարդակի պահպանումը և թեղուտի հանքի շահագործման պարագայում հանքարդյունաբերության և մետաղագործության ակնկալվող աճը, նախորդ տարիների ընթացքում սննդի վերամշակման, դեղագործության և էներգետիկայի բնագավառում իրականացված ներդրումների արդյունքում համապատասխանաբար սննդամբերքի, խնիչքի, դեղերի և էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների աճը՝ պայմանավորված նախատեսվող շինարարական ծրագրերի իրագործմամբ: **Կանխատեսվող հորիզոնում** արդյունաբերության աճը կկայունանա 5.7-6.3%-ի շրջանակներում՝ մոտ գտնվելով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

Հիմնարարությամբ ճյուղում 2014 թվականին ակնկալվում է ավելացված արժեքի շուրջ 6.5-8.5% աճ, որին հիմնականում կնպաստեն պետական, հանայնքային բյուջեների և միջազգային կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվող ճանապարհների, ոռոգման համակարգի, ջրանատակարարման, իանրապետության հյուսիսային սահմանակետերի և Երևանի մետրոպոլիտենի արդիականացմանն ուղղված շինարարական աշխատանքները: **Կանխատեսվող հորիզոնում** շինարարության ճյուղում առաջարկի և պահանջարկի միջև առաջացած անհավասարակշռության աստիճանական վերացման արդյունքում ակնկալվում է աճի կայունացում 1-3%-ի շրջանակներում:

Ծառայությունների ճյուղում ավելացված արժեքի իրական աճը կանխատեսվում է 5-6.5%-ի շրջանակներում՝ հիմնականում պայմանավորված մասնավոր և պետական ծախսումների ակնկալվող աճով, որն անդրադառնալու է ինչպես առևտրաշրջանառության ծավալների, այնպես էլ մատուցված այլ ծառայությունների ծավալների վրա: **Կանխատեսվող հորիզոնում** կապահպանվեն ծառայությունների բնականոն աճի տեմպերը՝ համահունչ մնալով ներքին պահանջարկի միջնաժամկետ կանխատեսումներին:


Գյուղատնտեսությամբ ճյուղում ավելացված արժեքի իրական աճը 2014 թ. կանխատեսվում է 4.5-6.5%-ի շրջանակներում, որին նպաստելու է ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության ենթաճյուղերում ակնկալվող աճը՝ պայմանավորված վերջին տարիներին պետական և մասնավոր հատվածի կողմից ոլորտում իրականացված ներդրումների արդյունքում ջերմոցային տնտեսությունների ընդլայնմանը, ցանքատարածությունների, բերքատվության և անասնագլխարանակի աճով: **Կանխատեսվող հորիզոնում** հիմնականում կապահպանվեն բնականոն աճի տեմպերը:

Կանխատեսվող հորիզոնում բազային սցենարի նկատմամբ տնտեսական աճի ռիսկերը երկկողմանի հավասարակշռված են՝ պայմանավորված համաշխարհային և մերժին տնտեսության հետագա զարգացումներով:

Մասնավորապես՝ ներքին տնտեսությունից բխող ռիսկերը հիմնականում կախված են ծրագրված հարկաբարյութետային քաղաքականության իրականացման ընթացքից և մասնավոր ներդրումների վերականգնման տեմպերից:

Կանխատեսվող հորիզոնում բազային սցենարի նկատմամբ
մկանամբ տնտեսական աճի ռիսկերը երկկողմանի՝
հավասարակշռված են՝ պայմանավորված
համաշխարհային և մերժին տնտեսության հետագա
զարգացումներով:

ՀՆԱ իրական աճի (կուտակային) կամխատեսման հավանականությունների բաշխումը 3 տարվա կամխատեսման հորիզոնում



2014 թվականին ակնկապվում է տնտեսության միջին անվանական աշխատավարձերի շուրջ 13% աճ՝ 2013 թվականին արծանագրված 6.5% աճի փոխարեն:

Ժամանակահատված	ՀՆԱ իրական աճի (կուտակային) կամխատեսման հավանականությունների բաշխում			
	90% հավանականության միջակայք		30% հավանականության միջակայք	
	Նվազագույն	առավելագույն	Նվազագույն	առավելագույն
2013 հունվար-դեկտեմբեր/2012 հունվար-դեկտեմբեր	3.3%	3.6%	3.1%	3.7%
2014 հունվար-դեկտեմբեր/2013 հունվար-դեկտեմբեր	5.4%	6.1%	4.3%	7.2%
2015 հունվար-դեկտեմբեր/2014 հունվար-դեկտեմբեր	5.1%	6.1%	3.3%	7.9%
2016 հունվար-դեկտեմբեր/2015 հունվար-դեկտեմբեր	4.9%	6.1%	2.8%	8.1%


Աշխատամքի շուրջ:⁴ 2014-16 թվականների համար աշխատամքի շուրջայի ցուցանիշների կամխատեսումները նախորդի համեմատ եականորեն չեն փոխվել: Կամխատեսվող տնտեսական աճի և գնաճի զարգացումների, ինչպես նաև Կառավարության՝ աշխատավարձի աճին ուղղված քաղաքականության պահպանման պարագայում 2014-16 թվականներին կարագանան անվանական աշխատավարձի աճի տեսները, իսկ գործազրկության մակարդակը կայուն կնվազի:

Մասնավորապես՝ 2014 թվականին ակնկալվում է տնտեսության միջին անվանական աշխատավարձերի շուրջ 13% աճ՝ 2013 թվականին արծանագրված 6.5% աճի փոխարեն: Տարվա ընթացքում անվանական աշխատավարձերի աճի տեսների արագացմանը կնպաստեն նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացումը 45000-ից մինչև 50000 ՀՀ դրամ և պետական հատվածում զբաղվածների աշխատավարձերի նշանակալի բարձրացումը, որը տեղի կունենա առավելապես տարվա երկրորդ կիսամյակում: Նշենք նաև, որ պետական հատվածի աշխատավարձերի աճը կիանգեցնի մասնակոր հատվածի աշխատավարձերի որոշակի աճի՝ պայմանավորված երկու հատվածների միջև միջջուղային մրցակցությամբ: Մասնավոր հատվածի ձեռնարկություններում ավելացված միավոր աշխատուժի ծախսերի հետևանքով տարվա երկրորդ կիսամյակում սպառողական շուկայում գնահատվում են թույլ գնաճային ծննդուներ՝ մոտ 0.2 տոկոսային կետի չափով:

2014 թվականին սպասվող տնտեսական աճի պայմաններում ակնկալվում է գործազրկության մակարդակի նվազման միտման պահպանում: Այսպես՝ ըստ ԿԲ գնահատումների, 2014 թվականին գործազրկության միջին մակարդակը կկազմի 14.9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.9 տոկոսային կետով: **2015-16 թթ.** Կամխատեսվող տնտեսական աճի պայմաններում կշարունակվի գործազրկության կայուն նվազման միտունը:

Կամխատեսվող տնտեսական աճի, գնաճի, նվազող գործազրկության մակարդակի, ինչպես նաև Կառավարության՝ աշխատավարձի աճին նպատակուղղված քաղաքականության պահպանման պարագայում 2015-16 թվականներին անվանական աշխատավարձերը կշարունակեն 2013 թվականի համեմատ աճել ավելի արագ տեսներով: Նշենք նաև, որ 2014 թվականի երկրորդ կեսին պետական հատվածում զբաղվածների աշխատավարձերի նշանակալի բարձրացման հետևանքները կպահպանվեն նաև 2015 թվականի

Միջին անվանական աշխատավարձերի տ/տ աճ



⁴ Աշխատամքի շուրջայի 2013 թվականի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ իհմնված 2013 թվականի երրորդ եռամյակի և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների փաստացի ցուցանիշների վրա: Ենթարաժնում ներկայացված աճի ցուցանիշները նախորդ տարվա նոյեմբերի գնաճային մակարդակը են, եթե այլ բան նշված չէ:

առաջին կիսամյակում՝ հաճգեցնելով այդ ժամանակահատվածում համախառն աշխատավարձերի բարձր աճի տեմպերի պահպանաճը:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ 2014 թվականի երկրորդ կիսամյակում պետական աշխատավարձերի աճով պայմանավորված՝ որոշակիորեն կարգանա նաև մասնավոր հատվածում աշխատավարձերի աճի տեմպը, որը կիանգեցնի մասնավոր հատվածում ծեռնարկությունների ծախսերի ավելացմանը: Արդյունքում, լրաց ԿԲ գնահատումների, սպառողական շուկայում առաջարկի կողմից կստեղծվեն թույլ գնաճային ծնշումներ՝ մոտ 0.2 տոկոսային կետի չափով, որոնք կչեզոքանամ 2015 թվականի առաջին կեսին, և կանխատեսվող հորիզոնում աշխատանքի շուկայից գնաճային ծնշումներ չեն ակնկալվում⁵:

Նամախառն պահանջարկ⁶

2014 թվականին համախառն պահանջարկը կամ միջինից բարձր տեմպերով և կկազմի 6.1%:

Հնդկային հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում 2014 թվականին համախառն պահանջարկը կամ միջինից բարձր տեմպերով և կկազմի 6.1%: Այնուհետև՝ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության թուլացմանը զուգընթաց, 2015 թվականի երկրորդ կիսամյակից սկսած, համախառն պահանջարկը կամ ավելի դանդաղ, բայց կայուն և տնտեսական աճին համահունչ տեմպերով:

2014 թվականի մասնավոր սպառման աճի տեմպի գնահատականը նախորդ կանխատեսումների համեմատ չի փոխվել և կազմում է 5.3%, որը զգալիորեն բարձր է 2013 թվականին արձանագրված 1.8% աճի համեմատ:

Եներգակիրների սակագների աճով պայմանավորված բարձր գնաճը, ինչպես նաև վարկավորման ծավալների աճի տեմպերի դաշտաղումը այն գործոններն են, որոնք պայմանավորել են մասնավոր իրական սպառման ցածր աճի տեմպերը 2013 թվականի երկրորդ կեսին և 2014 թվականի սկզբին:

Կանխատեսվող ընդհանուր տնտեսական միջավայրում 2014 թվականին սպառման է պետական աշխատավարձերի և կենսարուցակների նշանակալի ավելացում, որը կիանգեցնի բնակչության տնօրինվող եկամտի աճի: Պայմանավորված տնօրինվող եկամտի աճով՝ 2014 թվականի երկրորդ եռամյակից մասնավոր սպառման աճի տեմպերը կարագանան և բարձր մակարդակում կապահպանվեն 2015 թվականի սկզբին, այնուհետև՝ 2015-16 թթ., աստիճանաբար կկայունանան 4.0%-ի շուրջ:

2013 թվականի չորրորդ եռամյակուն տնտեսությունում ներդրումային ակտիվությունը սպառման ավելի թույլ է եղել, ինչի մասին են վկայում շինարարության ճյուղում թողարկման ծավալների նվազումը հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում⁷, ինչպես նաև ներդրումների վերաբերյալ ՀՀ ԿԲ կողմից իրականացված հարցումները⁸: Դիմք ընդունելով վերը նշված զարգացումները՝ **2014 թվականին մասնավոր ներդրումների աճի տեմպը**


⁵ Միջին ժամանակահատվածում աշխատավարձերի աճը կիանգեցնի նաև պահանջարկի գնաճի, որն առավել մանրամասն նկարագրված է համախառն պահանջարկ հասովածում:

⁶ Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի 2013 թ. ցուցամիջները ՀՀ ԿԲ գնահատումներմ են: Նշված ցուցամիջների փաստացի թվերը ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված 2013 թվականի երրորդ եռամյակի տվյալներն են: Ենթաքածնում ներկայացված իրական աճի գնահատականները նախորդ տարվա նոյն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:


⁷ Տես <http://www.armstat.am/file/doc/99479513.pdf>

⁸ Տես <https://www.cba.am/AM/Economic%20Activity%20and%20Business%20Climate%20Indices/BAI,%20BCI2013.2.pdf>

Մասնավոր սպառման տ/տ աճ



Մասնավոր ներդրումների տ/տ աճ



կկազմի շուրջ 4%: Նշենք, որ 2014 թվականին կենսաթոշակային նոր համակարգի ներդրումը որոշակիորեն կխթանի տնտեսությունում խնայողությունները, հետևաբար և դրական կազմի մասնավոր ներդրումների վրա: **2015 - 2016 թվականներին** շինարարության ճյուղում տնտեսական ակտիվության վերականգնմանը զուգընթաց, մասնավոր ներդրումները դանդաղ կվերականգնվեն՝ ապահովելով այդ ժամանակահատվածում կանխատեսվող տնտեսական աճը:


Մասնավոր սպառնան և ներդրումների նշված օարգացումների պայմաններում 2014 թվականին մասնավոր ծախսումների աճի տեսակերը աստիճանաբար կարագանան, իսկ կանխատեսվող հորիզոնի վերջում կկայունանան 4.5%-ի շուրջ: Արդյունքում՝ կանխատեսվող հորիզոնի սկզբում մասնավոր ծախսումների ճնշվածքը գնահատվում է բացասական, որը 2014 թվականի վերջում կգրոյանա և 2015 թվականի առաջին կիսամյակում կլինի փոքր դրական՝ աստիճանաբար գրոյանալով կանխատեսվող հորիզոնի վերջում:

Այս պարագայում մասնավոր ծախսումները 2014 թվականի առաջին կիսամյակում գնաճի վրա կունենան 0.8-0.9 տոկոսային կետ զսպող ազդեցություն: Պայմանավորված վերը նկարագրված պետական ծախսերի ավելացմամբ՝ մասնավոր ծախսումների՝ 2014 թվականի երկրորդ կեսից սկսված գնանկումային ճնշումները կմեղմվեն և կչեղոքանան տարեկերջին: 2015 թվականի սկզբում մասնավոր ծախսումների ազդեցությունը կլինի թույլ գնաճային՝ 0.2-0.3 տոկոսային կետ, որը կչեղոքանա 2015 - 2016 թվականներին:

2014 թ. ապրանքների և ծառայությունների իրական արտահանման աճը կկազմի 11-13%:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական աճի ցուցանիշը 2014 թ. կկազմի 3.0-5.0%:

Իրական արտահանում և ներմուծում, (տ/տ %)



Համաշխարհային և ներքին տնտեսության օարգացումների ներքո 2013 թ. ընթացիկ հաշվի պակասուրդ/ՑՆԱ ցուցանիշը, ըստ նախական գնահատումների, կկազմի 8.5-8.8%:

2014 թ. ընթացքում համաշխարհային տնտեսության նոր կանխատեսումների, ինչպես նաև թեղուտի հանքի շահագործման արդյունքում հանքարդյունաբերության և մետաղագործության ակնկալվող լրացուցիչ աճի պարագայում վերանայվել է արտահանման աճի ցուցանիշը: Արդյունքում՝ կանխատեսվում է, որ 2014 թ. ընթացիկ հաշվի պակասուրդ/ՑՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ կնվազի:

Այսպես՝ 2014 թ. ապրանքների և ծառայությունների իրական արտահանման աճի տեմպերի ցուցանիշը վերանայվել է ավելացման ուղղությամբ և կկազմի 11-13%: Մասնավոր ներդրումների վերականգնման, հարկաբյուջետային ընդլայնողական քաղաքականության պայմաններում ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական աճի ցուցանիշը 2014 թ. կկազմի 3.0-5.0%:

Ուստասատանի տնտեսության աճի կանխատեսումների՝ նվազման ուղղությամբ ծցգրտմամբ՝ պայմանավորված ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները 2014 թ. կավելանան 7.0-9.0%-ով:

Վերը նշված ծցգրտումների արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդ/ՑՆԱ ցուցանիշը կշարունակի նվազել և 2014 թ. կծեսավորվի 7.0-8.0% միջակայքում՝ միջինժամկետ հատվածում հասնելով 5.0-6.0%-ի:

2014 թվականին ամբողջական պահանջարկի վրա **հարկարյութետային քաղաքականության ազդեցությունը գնահատվել** է «ՀՀ 2014 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ցուցանիշների հիման վրա, ըստ որի՝ 2013 թվականի նախնական ցուցանիշների նկատմամբ ակնկալվում է հարկեր/ՑՆԱ ցուցանիշի անփոփոխ մակարդակ և ծախսեր/ՑՆԱ ցուցանիշի՝ 0.8 տոկոսային կետով աճ: Ընդ որում,

**2014 թ-ին հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը
կլազմի 1.5 ընդայմող:**

ծախսերի աճը նախատեսված է ինչպես կապիտալ⁹, այնպես էլ ընթացիկ ծախսերի հաշվին: Վերջինս պայմանավորված է տարեսկզբից նախատեսված կենսառոշակների և ուժային կառույցների աշխատողների աշխատավարձերի, իսկ այնուհետև՝ հուլիսի 1-ից, քաղծառայողների աշխատավարձերի բարձրացմանք: Արդյունքում՝ պակասուրդ/Նևս հարաբերակցությունը 2014 թվականին կլազմի 2.3%:

2014 թ-ին, 2013-ի համեմատ, ամբողջական պահանջարկի վրա առավելապես ծախսերի ընդլայնող ազդեցությամբ պայմանավորված, ակնկալվում է հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցությունը. ազդակի ցուցանիշը կլազմի 1.5¹⁰, որը կնպաստի 2014 թվականի տնտեսական ակտիվության խթանմանը: Ընդ որում, ընդլայնող ազդեցությունը կդրսելու հատկապես տարվա երկրորդ կեսին: Ներքին տնտեսության զարգացումները, թերևս, հիմնականում կպայմանավորվեն պետական բյուջեի կատարման ընթացքով:

Կանխատեսվող հորիզոնում հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները հիմնված են «ՀՀ 2015-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի» հիմնական ցուցանիշների կանխատեսումների վրա: Միջնաժամկետ հատվածում պետական ծախսերի ծրագիրը միտված է պետական պարտքի կայունությանը համարժեք բյուջեի պակասուրդի ապահովմանը, և հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն այդ ընթացքում գնահատվում է ոչ գնածային:

Հարկաբյուջետային քաղաքականության միջնաժամկետ ազդեցության գնահատականը						
% ՇՆԱ-ում	2012	2013	2014	2015	2016	
Պետական բյուջեի եկամուտներ	23.7	23.9	24.0	23.6	23.9	
Պետական բյուջեի ծախսեր	25.2	24.1	26.4	25.6	25.9	
Պարտքի տոկոսավճարներ	1.01	1.09	1.34	1.17	1.18	
Պետական բյուջեի հաշվեկշիռ	-1.5	-0.2 ¹¹	-2.3	-2.0	-2.0	
Անազանդ հաշվեկշիռ	-0.5	0.8	-1.0	-0.8	-0.8	
Մեկանգայա/Ժամանակավոր հոսքեր [*]	-0.3	0.5	-0.2	-0.4	-0.3	
Եշգրտված հաշվեկշիռ ^{**}	-0.2	0.3	-0.8	-0.4	-0.5	
Տիկիկ հաշվեկշիռ ^{***}	0.3	-0.2	0.0	0.0	0.0	
Ցիկլից ծցգրտված առաջնային հաշվեկշիռ (կառուցվածքային հաշվեկշիռ)	-0.5	0.5	-0.8	-0.4	-0.5	
Հարկաբյուջետային դիրք ^{****}		-1.0	1.3	-0.4	0.1	

* Բյուջեի հաշվեկշիռ համած պարտքի տոկոսավճարներ:
** Բյուջեի ժամանակավոր կամ մեմանգամա մուտքեր: Տվյալ դեպքում դիտարկված են գուտ վարկափորման միջոցները («+» նշանը՝ միջոցների տրամադրում, «-» նշանը՝ միջոցների հետքերայդ):
*** Անազանդ հաշվեկշիռ՝ ծցգրտված մեկանգայա կամ ժամանակավոր մուտքերով:
**** ՀՀ ԿԲ գնահատական բյուջեի հաշվեկշիռ այն մասը, որն ավտոմատ կախված է գործարար պարերաշրջանից: Վերջինիս բարարիչները կախված են ՂՆՍ ծեղրվածիք նկատմամբ եկամուտների և ծախսերի նկումության գործակիցներից:
***** ՀՀ ԿԲ գնահատական կառուցվածքային հաշվեկշիռ տ/ն փոփոխությունը, որն արտացոլում է դիմերեցին հարկաբյուջետային քաղաքականության բնույթը (դրական նշանը նշանում է հարկաբյուջետային ընդլայնում, քացանական նշանը զարդարում):

Ամփոփելով նշենք, որ 2014 թվականի առաջին կիսամյակում հարկաբյուջետային հատվածի, մասնավոր պահանջարկի և աշխատուժի շուկայի ամբողջական ազդեցությունը ներքին գների վրա կլինի գնանկումային՝ 0.4-0.5 տոկոսային կետ, որը կշեզոքանա

⁹ Կապիտալ ծախսերի աճը պայմանավորված է ինչպես «Դյուսիս-հարավ ծանապարհային միջանցք ներդրումային ծրագրով», այնպես էլ այլ ներդրումային ծրագրերի իրականացմանը:


¹⁰ 2013 թվականի պետական բյուջեի ցուցանիշները արտացոլված են կամխիկ հուբերով:

¹¹ 2013 թվականի պակասուրդի ցուցանիշը նախնական է:

տարվա երկրորդ կեսում: 2014 թվականի վերջից մինչև 2015 թվականի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում վերը նշված գործողների ամբողջական ազդեցությունը գնահատվում է թույլ գնաճային՝ 0.6-0.7 տոկոսային կետի չափով՝ պայմանավորված նշված ժամանակահատվածում ընդայնող հարկարյութետային քաղաքացումներով: 2015 թվականի երկրորդ կեսից սկսած՝ ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայում ակնկալվող զարգացումներով: 2015 թվականի երկրորդ կեսից սկսած՝ ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի ազդեցությունը գնաճի վրա գնահատվում է չեղոք:

2.3. Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող երեք տարվա հորիզոնում

Անդրադառնալով ընթացիկ կանխատեսումներին՝ նշենք, որ իհմնական եռամսյակային մակրոցուցանիշների կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների գնահատման համար իհմք են ընդունվել 2013 թ. չորրորդ եռամսյակում ձևավորված մակրոտնտեսական միջավայրի փաստացի ցուցանիշներն ու գնահատականները, ինչպես նաև ապագայի վերաբերյալ տեղեկատվությունը:



Ժամանակահատված	Գնաճի՝ տվյալ միջակայթում լինելու հավանականությունը				
	< 2.5%	2.5 - 5.5%	5.5 - 7.0%	7.5 - 9.0%	> 9.0%
I եռ. 2014	0.0%	85.1%	14.9%	0.0%	0.0%
II եռ.	12.1%	75.9%	11.7%	0.3%	0.0%
III եռ.	44.5%	52.9%	2.5%	0.0%	0.0%
IV եռ.	24.6%	63.7%	11.0%	0.7%	0.0%
I եռ. 2015	17.6%	61.6%	18.4%	2.2%	0.2%
II եռ.	23.3%	56.5%	17.2%	2.6%	0.4%
III եռ.	32.3%	53.5%	12.4%	1.6%	0.2%
IV եռ.	25.8%	54.4%	16.6%	2.7%	0.5%
I եռ. 2016	23.3%	53.3%	18.9%	3.7%	0.8%
II եռ.	25.8%	51.2%	18.2%	3.9%	0.9%
III եռ.	27.5%	50.7%	17.3%	3.6%	0.9%
IV եռ.	26.2%	50.4%	18.3%	4.1%	1.0%

Առկա պարտքային և աշխարհաքաղաքական ռիսկերի պարագայում կանխատեսվող հորիզոնում զարգացած երկրների տնտեսական ածըլ կշարունակի դանդաղորեն վերականգնվել: Զարգացող երկրներում կան զգալի անորոշություններ՝ կապված կապիտալի հոսքերի տատանողականությամբ պայմանավորված տնտեսական հիմնախնդիրների հետ: Հաճաշխարհային տնտեսության նման վարքագծի պայմաններում հիմնական հոլոքային և պարենային ապրանքների շուկաներում պահանջարկի գործոններով պայմանավորված գնաճային ճնշումներ չեն ակնկալվում: Այնուամենայնիվ, առանձին ապրանքների շուկաներում կարող են դիտարկվել առաջարկի հետ կապված յուրահատուկ խնդիրներ՝ հիմնականում պայմանավորված աշխարհաքաղաքական, բնակլինայական և այլ տիպի երևույթներով:

Չորրորդ եռամսյակում դրսնորվել են տնտեսական ակտիվության վերականգնման նշաններ, որը, այնուհանդերձ, սպասվածից փոքրից ցածր է եղել: Տնտեսական ակտիվության վերականգնմանը նպաստել է շինարարության ճյուղի անկման կտրուկ դանդաղումը և գյուղատնտեսության ճյուղի ավելացված արժեքի աճը: Պահանջար-

կի տեսանկյունից իր ազդեցությունն է ունեցել **իրանող հարկաբյուջետային քաղաքականությունը**: Դրամավարկային պայմանների թուլացումը չորրորդ եռամյակում նպաստել է դրամային վարկավորնան աճի տեմպերի արագացմանը, որը նույնական դրական ազդեցություն է ունեցել համախառն պահանջարկի վրա: Գնահատվում է, որ չորրորդ եռամյակում ՀՆԱ ճեղքածքը պահպանվել է երրորդ եռամյակի բացասական մակարդակում, որը նպաստել է բնականոն գնածի տեմպերի՝ կանխատեսվածից արագ նվազմանը: Վերջինս, գուգակցվելով գնաճային սպասումների նվազման և պարենային ապրանքների գնածի նվազման հետ, հանգեցրել է ընդհանուր գնածի տեմպերի կտրուկ նվազմանը, որը տարեվերջին կազմել է 5.6%՝ ընդհուար մոտենալով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանագծին:

ԿԲ կանխատեսումների համաձայն՝ 2014 թ-ին գնաճը շարունակելու է նվազել և տարվա երրորդ եռամյակում կգտնվի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանին մոտ, որը պայմանավորված կլիմի 2013 թվականի հուլիսին էներգակիրմերի սակագների բարձրացման ազդեցության չեզոքացմամբ: Միևնույն ժամանակ, դրամավարկային պայմանների թուլացումը, 2014 թվականի փետրվարից դրամով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորնան նորմայի նվազեցումը 4%-ից 2%-ի¹², սպասվող խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստելու են ՀՆԱ բացասական ճեղքածքի կրծատմանը և արդեն 2014 թվականի երկրորդ կիսամյակում դրական ճեղքածքի (պահանջարկի գնաճային ճնշումների) ծևակորմանը: Վերջինիս ազդեցությամբ գնաճը տարեվերջին կկայունանա իր նպատակային մակարդակի շրջակայքում:

2014 թվականի սկիզբը նշանավորվել է անորոշությունների ավելացմամբ՝ կապված թե՛ արտաքին և թե՛ ներքին տնտեսության պայմանագործության հետ:

2014 թվականի սկիզբը նշանավորվել է անորոշությունների ավելացմամբ՝ կապված թե՛ արտաքին և թե՛ ներքին տնտեսության պայմանագործության հետ: Արտաքին աշխարհում անորոշությունները պայմանավորված են զարգացող երկրների (կարևորվում է հաղորդական ռուսաստանը) տնտեսական զարգացման հեռանկարներով: Ներքին տնտեսությունների հիմնական անորոշությունը կապված է մասնավոր կապահով ներդրումների վերականգնման տեմպերի և ՀՀ պետրությի կառավարման ընթացքի հետ:

Արտաքին աշխարհում անորոշությունները պայմանավորված են զարգացող երկրների (կարևորվում է հատկապես Ռուսաստանը) տնտեսական զարգացման հեռանկարներով: ԱՍՍ դաշնային պահուստային համակարգի կողմից քանակական ընդլայնման ծրագրի կրծատումը զարգացող երկրներից կապիտալի արտահոսքի խթան է հանդիսացել, որն էլ հանգեցրել է զարգացող երկրների արժույթների արժեգործկանը և տնտեսական աճի որոշակի դանդաղմանը: Ներկայումս անորոշությունները կապված են կապիտալի հոսքերի տատանողականության պայմաններում զարգացող երկրների ֆինանսական շուկաների կայունացման և տնտեսական աճի տեմպերի վերականգնման հեռանկարների, ինչպես նաև հումքային և պարենային ապրանքների շուկաների վրա դրանց հնարավոր ազդեցության փոխանցման հետ:

Ներքին տնտեսություններ հիմնական անորոշությունը կապված է մասնավոր կապիտալ ներդրումների վերականգնման տեմպերի և ՀՀ պետրությի կատարման ընթացքի հետ, որոնք կարող են էապես ազդել համախառն պահանջարկի և գնածի զարգացումների վրա: Միևնույն ժամանակ, տնտեսական զարգացումների վրա Մաքսային միությանն անդամակցության հնարավոր ազդեցության հետո ԿԲ-ն հաջորդ հրապարակումներում կանոնադրամա դրանց ազդեցությամբ գմանառումներին:

Տնտեսական զարգացումների վրա Մաքսային միությանն անդամակցության հնարավոր ազդեցությամբ առումնվ թերևս հստակեցումն չկա, քանի որ անդամակցության պայմանները քննարկման չփոխվում են: Դրանց հստակեցումն հետո ԿԲ-ն հաջորդ հրապարակումներում կանոնադրամա դրանց ազդեցությամբ գմանառումներին:

¹² ՀՀ ԿԲ խորհրդի 24.12.2013 թ. թիվ 299-Ն որոշում:

Այս բոլոր գործոնների ներքո գնահատվում է, որ **12-ամսյա գնածը** 2014 թվականին կլինի **2.5-5.5% միջակայքում**, իսկ **տնտեսական ածը**, 2014 թվականի արդյունքներով, կլազմի **5.4-6.1%**:

Մակրոտնտեսական սպասվող միջավայրին համապատասխան՝ 2014 թ. առաջին եռամսյակում ԿԲ-ն կշարունակի թուլացնել դրամավարկային պայմանները՝ արձագանքելով դեռևս պահպանվող ցածր տնտեսական ակտիվությանն ու գնաճային միջավայրի մեղմնանը, իսկ ԿԲ դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունները մեծապես կպայմանավորվեն վերոնշյալ անորոշությունների դրսևորումներով:

Կանխատեսվող հորիզոնում վարկավորման աճի տեմպերը կպահպանվեն նույն մակարդակի վրա: ԿԲ-ն ճկունորեն կարձագանքի իրացվելիության պահանջարկի փոփոխություններին՝ ապահովելով փողի պահանջարկին համահունչ փողի առաջարկ՝ տոկոսադրույթների նպատակային մակարդակի պահպանման համար:

Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում գնահատվում են հավասարակշռված: Ընդ որում, իիմնական ռիսկերը կապված են զարգացող երկրների տնտեսական զարգացումների հեռանկարների և ներքին պահանջարկի զարգացումների հետ, որոնց արդյունքում գնաճի կանխատեսված արժեքի շուրջ անորոշությունները զգալի ավելացնել են: Նման ռիսկերի դրսևորման պարագայում կենտրոնական բանկը կարձագանքի համապատասխան քաղաքականությամբ՝ ապահովելով գնաճի նպատակային մակարդակը միջնժամկետ հատվածում:


3. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԶՈՐՈՌԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՓԱՍՏԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

3.1. Գնաճ

3.1.1. Փաստացի գնաճ և գնաճի նպատակի իրագործում

2013 թ. վերջին 12-ամսյա գնաճը ծևավորվել է 5.6% մակարդակում՝ ընդհուա մոտենալով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին:

2013 թ. չորրորդ եռամսյակում գնաճային միջավայրը մեղմվել է ավելի արագ տեմպերով, որի արդյունքում մոտ մեկ կիսամյակ շուտ է 12-ամսյա գնաճը մոտեցել իր տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանագծին:



Հաշվի առնելով 2013 թ. երրորդ եռամսյակում ծևավորված մակրոտեսական միջավայրը, որը բնութագրվել է ներքին պահանջարկի՝ նախատեսվածից ավելի թուլացմամբ և բարձր գնաճային միջավայրի որոշ չափով մեղմնամբ, ինչպես նաև եռամսյակի ընթացքում կը կողմից գնաճային սպասումների խարսխմանն ուղղված դրամավարկային պայմանների խստացման ազդեցությունը՝ **տարվա վերջին եռամսյակում ակնկալվում էր գնաճի տեմպերի նվազում:** Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը լինելու էր **6.5-7.0%** միջակայքում վերաբառնալով նպատակային մակարդակին արդեն 2014 թ. առաջին կեսին:

Փաստացի արդյունքներով՝ մինչև տարեվերջ 12-ամսյա գնաճը նվազել է ավելի արագ տեմպերով և դեկտեմբերի վերջին ավելի քան 1.0 տոկոսային ենթով ցածր է եղել ակնկալվող ցուցանիշից: Այսպես՝ չորրորդ եռամսյակում արծանագրվել է 2.3% գնաճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4.8%-ի փոխարեն, ինչի արդյունքում **տարվա վերջին 12-ամսյա գնաճը ծևավորվել է 5.6% մակարդակում՝ ընդհուա մոտենալով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին:** Եռամսյակի ընթացքում արծանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների աճով, որի կազմում աճել են «Բանջարեղեն» և «Կարտոֆիլ» ապրանքախմբի գները: Այս տարեվերջին «Միրգ» ապրանքախմբի գները սեզոնային աճի փոխարեն նվազել են, ինչն էլ պայմանավորել է սպասվածի համենատ ցածր գնաճի ծևավորումը:

Ապահովախմբի անվանումը	Գնաճն ըստ հիմնական նպաստում ունեցող ապրանքախմբերի					
	2013 թ. սեպտեմբեր (տ/տ)		2013 թ. դեկտեմբեր (տ/տ)		2013 թ. չորրորդ եռամսյակ	
	Տ	Հ	Տ	Հ	Տ	Հ
ԱԳԻ	8.2		5.6		2.3	
Պարենային ապրանքներ	8.0	4.3	4.0	2.1	4.0	2.2
հացամթերք	6.1	0.6	1.6	0.2	-0.1	0.0
կաթնամթերք	12.2	0.5	10.9	0.5	1.0	0.0
մսամթերք	4.0	0.4	2.3	0.2	0.1	0.0
միղոց	20.6	0.8	0.9	0.0	-0.6	0.0
բանջարեղեն և կարտոֆիլ	12.4	0.8	1.7	0.1	57.6	3.6
կենդանական և բուսական յուղ	12.5	0.4	3.3	0.1	-2.1	-0.1
ձուլ	38.6	0.5	24.6	0.3	-1.6	0.0
Ոչ պարենային ապրանքներ	3.4	0.5	3.5	0.5	1.8	0.3
Ծառայություններ	10.9	3.4	9.7	3.0	-0.6	-0.2

Չորրորդ եռամսյակում 12-ամսյա բնականոն գնաճը ևս ցուցաբերել է նվազողական վարքագիծ՝ սեպտեմբերի 5.3%-ից դեկտեմբերի վերջին համելով 3.7%-ի:

Այժմ ներկայացնենք այն փաստարկներն ու սպասումները, որոնց հիման վրա նախորդող մեկ տարվա հորիզոնում կանխատեսվել և

իրագործվել է գնաճի նպատակը, ինչպես նաև այդ ժամանակահատվածում առաջացած էական շեղումները, որոնք հանգեցրել են կանխատեսումների հետագա ծջրտումների: **2013 թ. սկզբին**, որը նախորդ մեկ տարվա հորիզոնի սկիզբն էր, առկա էր ցածր գնաճային միջավայր, իսկ տարվա ընթացքում, պայմանավորված ներքին տնտեսությունում օյլուղատնտեսության առաջարկի շոկի մարման և արտաքին հատվածից սպասվող ոչ գնաճային ազդեցություններով, ակնկալվում էր գնաճային միջավայրի չափավոր ընդլայնում ու 12-ամյա գնաճի աստիճանական բարձրացում: Այս պարագայում **12-ամյա գնաճը պետք է արագանար 2013-ի առաջին կիսամյակում**, իսկ այնուհետև կայունանար նպատակային ցուցանիշի շուրջ: Նման զարգացումների ներքո ՀՀ ԿԲ-ն նախատեսում էր տարվա ընթացքում իրականացնել չեղոր դրամավարկային քաղաքականություն¹³:

Իրականում, մինչև 2013 թ. մայիս գնաճային զարգացումներն ընթացել են ծրագրված ուղղություններին համահունչ: գնաճային միջավայրի աստիճանական ընդլայնման արդյունքում **12-ամյա գնաճը նախորդ տարվա վերջի 3.2%-ից ապրիլի վերջին հասել է 3.9% մակարդակի՝** գրեթե համընկնելով նպատակային ցուցանիշին:


Սակայն մայիսին իրավիճակը եականորեն փոխվեց, երբ գյուղատնտեսության ճյուղի զարգացումներով (կարկտահարություն և վեգետացիոն շրջանի նամանակի հետաձգում) և որոշ ծառայությունների գների առով պայմանավորված տնտեսությունում կուտակվել էր գնաճային զգալի ներուժ: Միևնույն ժամանակ, հրապարակվել էր տեղեկատվություն երրորդ եռամյակից Էներգակիրների սակագների հնարավոր վերանայման վերաբերյալ: Նշված գործոնները, ըստ ենթյան, առաջարկի շոկ էին, որը գնաճային լուրջ ռիսկեր էր պարունակում: Արդյունքում՝ մայիս-օգոստոս ժամանակահատվածում գնաճային միջավայրը զգալի ընդլայնվել է. արձանագրվել է 0.6% գնաճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4.5% գնանկման փոխարեն, ինչի հետևանքով 12-ամյա գնաճն օգոստոսի վերջին հասել է նախորդ երկու տարվա կտրվածքով ամենաբարձր՝ 9.3% մակարդակի (մոտ 3.0 տոկոսային կետով նպաստել է Էներգակիրների սակագների աճը, 0.7 տոկոսային կետով՝ պարենային ապրանքների և 0.7 տոկոսային կետով՝ որոշ ծառայությունների գների աճը):

Վերոնշյալ գործոնների հիման վրա ապրիլին և հուլիսին **գնաճի կանխատեսումները վերանայվել են աճի ուղղությամբ**. մինչև 2014 թ. երկրորդ կիսամյակ 12-ամյա գնաճը կտատանվի միջին հաշվով 8.0%-ի շրջանակներում, իսկ այնուհետև նվազելով՝ կլիմի տատանումների թույլատրելի միջակայքում և միջնաժամկետ հատվածում կտատանվի նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

Ընդ որում, եթե 12-ամյա գնաճի ցուցանիշից բացառենք Էներգակիրների սակագների բարձրացման ուղղակի և երկրորդային ազդեցությունները, ըստ ենթյան, այն մոտ է գտնվել իր տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանակետին:

2013 թ. սկզբից մինչև օգոստոս գնաճային վերոնշյալ զարգացումներին ՀՀ ԿԲ-ն արձագանքել է **դրամավարկային պայմանների պահպանմամբ՝ անփոփոխ թողնելով քաղաքականության գործիքի տոկոսադրույքը՝ 8%**: Դրա հիմնական փաստարկը այդ ժամանակահատվածում գնաճի վրա գյուղմթերքների գների՝ 2012 թ. ամռան ամիսներին դիտված անկման ընդգծված սեզոնայնության ազդեցության սպասվող վերացումն էր և դրա արդյունքում 12-ամյա գնաճի աստիճանական աճը, ինչպես նաև կանխատեսվող ողջ հորիզոնում

2013 թ. չորրորդ եռամյակում գնաճային միջավայրի զգալի մեղման և գնաճային սպասումների խարսխման պարագայում 12-ամյա գնաճի կանխատեսումները տարեկանը վերանայվել են կտրուկ նվազման ուղղությամբ



¹³ Չեղոր դրամավարկային քաղաքականությունը ենթադրում է քաղաքականության դրույքի համարդում գնահատված չեղոր տոկոսադրույքին, որի պարագայում գնաճը գտնվում է նպատակային, իսկ ՀՆԱ-Ծ իր հավասարակշիռ մակարդակում: Ներկայում չեղոր տոկոսադրույքը գնահատվում է շուրջ 8%:

արտաքին ու ՀՀ տնտեսությունների զարգացման հեռանկարում թույլ գնաճային միջավայրի պահպանումը: **ԵՎ, չնայած 2013 թ. մայիս-հուլիս ժամանակահատվածում կարծաժամկետ կտրվածքով առկա էր գնաճի արագացում, սակայն ԿԲ-ն շարունակել է իրականացնել չեղոք դրամավարկային քաղաքականություն՝ հաշվի առնելով բնականոն գնաճի ցածր մակարդակի և գնաճային խարսխսկած սպասումների պարագայում միջնաժամկետ հատվածում իր նպատակային արժեքին գնաճի վերադառնալու հանգամանքը:**

Օգոստոսին ՀՀ ԿԲ-ն, արձագանքելով գնաճային միջավայրի շարունակվող ընդլայնմանը (12-ամսյա բնականոն գնաճը նույնական ավելացել է՝ նախորդ տարվա վերջի 3.5%-ից օգոստոսի վերջին հասնելով 5.7%-ի) և կարծաժամկետում գնաճային սպասումների ուժգնացմանը՝ կապված էներգակիրների սակագների աճի հետ, բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույթը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.5%, որը պահպանվել է նաև սեպտեմբերին: Դրական իրական տոկոսադրույթների պահպանումը միտված էր ներքին զարգացումների հետևանքով ձևավորված գնաճային սպասումները խարսխելուն և էներգակիրների սակագների աճի երկրորդային ազդեցությունները մեղմելուն:

Սեպտեմբերից գնաճային միջավայրն աստիճանաբար մեղմվել է՝ պայմանավորված ներդրումների ցածր մակարդակի և մասնավոր սպասումն աճի տեմպերի դանդաղման պարագայում տնտեսական աճի ցածր տեմպերի պահպանմամբ, ԿԲ կողմից դրամավարկային պայմանների խստացմամբ, ինչպես նաև տարեվերջին պարենային որոշ ապրանքների գների սեզոնային ավելի քիչ աճով: Այսպես, տարվա վերջին չորս ամսում գրանցվել է ընդամենը 2.0% գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շուրջ 5.7%-ի փոխարեն, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը դեկտեմբերի վերջին իջել է մինչև 5.6%՝ ընդհուած մոտենալով գնաճի տատանումների թույլատրենի միջակայքի վերին սահմանին: Ընդ որում, այդ նույն ժամանակահատվածում 2 տոկոսային կետով նվազել է նաև բնականոն գնաճը՝ գորեք համենկնելով գնաճի նպատակային ցուցանիշին: Արդյունքում՝ 2013 թ-ին միջին գնաճը կազմել է 5.8%:


Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով գնաճային միջավայրի՝ սպասվածից ավելի մեղմնան հանգանքը, կարծաժամկետում ներքին գների վրա էներգակիրների սակագների բարձրացման գնաճային ազդեցության վերացումը, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում արտաքին և ՀՀ տնտեսություններից ոչ գնաճային աղդեցությունների սպասումները՝ ՀՀ ԿԲ-ն աստիճանաբար թույլացրել է դրամավարկային պայմանները: Մինչև տարեվերջ վերաֆինանսավորման տոկոսադրույթը ԿԲ-ն աստիճանաբար իջեցրել է ընդհանուր առմամբ 0.75 տոկոսային կետով՝ դեկտեմբերի վերջին սահմանելով 7.75%:

3.1.2. Ներմուծման գներ և արտադրողների գներ


Ներմուծման գմեր. 2013 թ. չորրորդ եռամսյակում միջանկյալ սպասումն ապրանքների ներմուծման դոլարային գներն աճել են, բացառությամբ ուսկու և նավի գների: Սպառողական ապրանքների ներմուծման դոլարային գները նույնական դրսնորել են աճի միտումներ: Արդյունքում՝ ընդհանուր ներմուծման դոլարային գներն աճել են եռ/եռ 1.1%-ով, որի պարագայում տ/տ աճը կազմել է 2.2%՝ նախորդ եռամսյակի տ/տ 3.9%-ի փոխարեն:

Միջանկյալ սպասումն ապրանքների ներմուծման գների տ/տ աճը իմանականում պայմանավորվել է գազի գների՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ցածր մակարդակով: Յարկ է հավելել, սակայն,

Ներմուծված ապրանքների գների տ/տ աճի տեմպերը 2013 թ. չորրորդ եռամյակում դաշտաղել են, %



2013 թ. հունվար-դեկտեմբերին գների առավել բարձր աճ է գրանցվել՝ և՝ արդյունաբերության, և՝ բռնագիտական ներուժումների գծով:



որ ուկու, ցորենի, շաքարավագի և նավթի դոլարային գները ցածր են մնում նախորդ տարվա չորրորդ եռամյակի միջին մակարդակից, որի արդյունքում վերջիններիս նպաստումը միջանկյալ սպառնան ապրանքախմբի գներին բացասական է: Սպառողական ապրանքների գների տ/տ աճը հիմնականում պայմանավորվել է Եվրոգոտու դոլարային գների աճով:

Արտադրողների գների¹⁴. 2013 թվականի չորրորդ եռամյակում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների ինդեքսների աճ, որի արդյունքում հունվար-դեկտեմբերին ՀՆԱ դեֆլուսորը, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, կազմել է տ/տ շուրջ 103.2:

Արդյունաբերության ճյուղում չորրորդ եռամյակում արձանագրվել է գների տ/տ 4.5% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 4.7%՝ պայմանավորված մշակող արդյունաբերության գների 3.8% և էներգիայի, գազի արտադրության և բաշխման գների 20.6% աճով: Վերջիններս համապատասխանաբար համաշխարհային և ներքին պահանջարկի շարունակական վերականգնման և 2013 թվականի հուլիսի 1-ից էներգակիրների սակագների բարձրացման արդյունք են:

Գյուղատնտեսության ճյուղում թեև եռամյակի ընթացքում արձանագրվել է գների¹⁵ տ/տ 1.8% աճ, սակայն հունվար-դեկտեմբերի անկումը կազմել է տ/տ 1%՝ պայմանավորված բուսաբուծության և անասնաբուծության ոլորտներում արձանագրված գնաճը պայմանավորված է կարտոֆիլի և բանջարաբռստանային կուլտուրաների՝ 10.1%, սնկերի՝ 14.1%, հացահատիկային մշակաբույսերի՝ 2.5% և բռստանային մշակաբույսերի՝ 80.1% գնաճով: Ընդ որում՝ բռստանային մշակաբույսերի բարձր գնաճը հիմնականում պայմանավորված է ապրիլ-մայիս ամիսներին տեղացած կարկուտի հետևանքով ձներում և սեխի ցանքատարածությունների կրծատմամբ: Իսկ անասնաբուծության ոլորտի գնանկումը հիմնականում մսի 5.5% գների նվազման արդյունք է:

Շինարարությունում չորրորդ եռամյակում արձանագրվել է գների տ/տ 2.7% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի գնաճը կազմել է տ/տ 2.5%՝ հիմնականում պայմանավորված ճյուղում աշխատավարձերի և շինանյութերի գների աճով:

Քեռնափոխադրությունների գների աճը չորրորդ եռամյակում կազմել է տ/տ 15.6%, որի պարագայում հունվար-դեկտեմբերին արձանագրված գների աճը կազմել է տ/տ 8.4%՝ պայմանավորված երկարութային (0.9% աճ), օդային (3.1% աճ), ավտոմոբիլային (2.2% աճ) և խողովակաշարային (20.4% աճ) տրանսպորտի սակագների աճով: Ընդ որում, խողովակաշարային տրանսպորտի սակագների բարձր աճը հիմնականում էներգակիրների սակագների բարձրացման հետևանք է:

3.1.3. Գնաճի և տոկոսադրույթի սպասումներ

ՀՀ ԿԲ-Ն 2013 թ. չորրորդ եռամյակում շարունակել է ֆինանսական հատվածի կազմակերպությունների և տնային տնտեսությունների շրջանում իրականացնել մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների սպասումների վերաբերյալ հարցումներ:

¹⁴Ներկայացված գների ինդեքսների փոփոխությունը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ է, եթե այլ բան նշված չէ:

¹⁵Ներկայացված են գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գները:

Ընթացիկ հարցման արդյունքներով՝ ֆինանսական համակարգում հիմնականում պահպանվել են կայուն գնաճային սպասումները, չնայած չորրորդ եռամսյակում դիտվել է գնաճային միջավայրի զգալի նեղմացում: Ընդ որում՝ ֆինանսական համակարգի կանխատեսումների նման կայունությունը համահունչ է եղել գնաճի ընթացիկ զարգացումներին, քանի որ վերջին երկու եռամսյակների կտրվածքով գնաճը ցուցաբերել է միջին հաշվով կայուն վարքագիծ: Ըստ հարցման արդյունքների՝ բանկերի գնաճային սպասումները մեկ տարվա հորիզոնում արտահայտվել են 12-ամսյա գնաճի՝ միջին հաշվով 5.3%, իսկ վարկային կազմակերպությունների գնաճային սպասումները՝ 4.2% մակարդակի շուրջ տատանմամբ: Տնային տնտեսությունների գնաճային սպասումները փոքր-ինչ նեղմվել են. նախորդ հարցման արդյունքներով հաշվարկված գնաճի միջին մակարդակը 5.2%-էր, այս եռամսյակում՝ շուրջ 4.9%:

Ըստ հարցման արդյունքների՝ ֆինանսական համակարգում շուրջական տոկոսադրույթների վարքագիծ վերաբերյալ սպասումները (մեկ տարվա կտրվածքով) հիմնականում կայուն մակարդակների պահպանման ուղղությամբ են:

3.2. Համախառն առաջարկ և համախառն պահանջարկ

3.2.1. Համախառն առաջարկ¹⁶

2013 թվականի երրորդ եռամսյակում **տնտեսական աճի ցուցացքը**, ըստ ԱՎԾ հրապարակման, կազմել է ընդամենը տ/տ 1.4%, որի պարագայում հունվար-սեպտեմբերի աճը հաշվարկվում է տ/տ 2.6%: Ընդ որում, նախորդ եռամսյակի՝ տ/տ 0.6% աճի համեմատ երրորդ եռամսյակի տնտեսական աճի տեսակի արագացումը հիմնականում արդյունք է արդյունաբերության ճյուղում արձանագրված աճի, օյուղատնտեսության ճյուղի աճի արագացման և շինարարության ճյուղի անկման դանդաղման:

2013 թվականի չորրորդ եռամսյակում տնտեսական ակտիվության փոքր-ինչ արագացման պայմաններում հունվար-դեկտեմբերի ՏԱՑ-ը կազմել է տ/տ 3.5% (հունվար-սեպտեմբերին՝ տ/տ 3.2%):

Թեև չորրորդ եռամսյակում տնտեսական ակտիվությունը նախորդ եռամսյակի համեմատ փոքր-ինչ արագացել է, այնուամենայնիվ, վերջինիս մակարդակը գնահատվում է ցածր: 2013 թվականի երկրորդ կեսին, նախորդ տարիների համեմատ ցածր տնտեսական ակտիվությունն իր հերթին պայմանավորվել է համաշխարհային տնտեսության թույլ աճով, ներքին տնտեսությունում ներդրումների նվազմամբ և էներգակիրների սակագների աճի բացասական ազդեցությամբ: Սասնավորապես՝ գագի և էլեկտրաէներգիայի սակագների աճի արդյունքում ավելացել են տնտեսության տարբեր ոլորտներում գործող ձեռնարկությունների ծախսերը, ինչի հետևանքով, սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պարագայում, պակասել են ձեռնարկությունների ներդրումների համար նախատեսված միջոցները, ինչպես նաև նվազել է դրանց շահութաբերությունը՝ պատճառ դառնալով տնտեսության ճյուղերում ներդրումների և առաջարկի կրծատման: Էներգակիրների սակագների աճով պայմանավորված

¹⁶ 2013 թվականի առաջին ինն ամիսներին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների իրական աճի ցուցանիշները ՀՀ ԿԲ կանխատեսություններն են, իսկ Ենթաճյուղերի ցուցանիշները ներկայացնում են 2013 թվականի հունվար-սեպտեմբերի թողարկման աճի տ/տ տեսակները. Եթե այլ բան նշված չէ:

Ակնկալվում է, որ 2013 թվականի հունվար-դեկտեմբերի տնտեսական աճի ցուցանիշը կտևնի 3.3-3.6% միջակայքում:

գների ընդհանուր մակարդակի աճը նվազեցրել է նաև իրական սպառման ծավալները՝ արտահայտելով տարվա երկրորդ կիսամյակում ներքին պահանջարկի թուլացումը ՀՀ տնտեսությունում¹⁷, որը ևս նպաստել է տնտեսական ակտիվության դանդաղմանը:

Դաշտի առնելով նաև, որ նասամբ են իրականացվել նախատեսված խոշոր ճանապարհաշինական աշխատանքները, ինչպես նաև պահպանվել է ներքին պահանջարկի աճի տեմպերի ցածր մակարդակը՝ տնտեսական աճի կանխատեսումները բազային սցենարի համեմատ փոքր-ինչ ճշգրտվել են նվազման ուղղությամբ: Արդյունքում ակնկալվում է, որ 2013 թվականի հունվար-դեկտեմբերի տնտեսական աճի ցուցանիշը կտևնի 3.3-3.6% միջակայքում:

Արդյունաբերության ճյուղում 2013 թվականի ընթացքում թողարկման ծավալների արձանագրված տ/տ 6.8% աճի պարագայում ճյուղի ավելացված արժեքի աճը 2013 թ. հունվար-դեկտեմբերին գնահատվում է տ/տ 3.8-4.8%: Դա հիմնականում պայմանավորվել է հանքագործական արդյունաբերության (8.6%), սննդամբերի¹⁸ (3%), մետաղուրգիայի (9.2%), շինանյութերի (7.9%), խնիքների¹⁹ (17.9%) և ծխախոտի (19.6%) արտադրության ծավալների աճով:

Հիմնվելով շինարարության 2013 թվականի հունվար-դեկտեմբերի փաստացի թողարկման ծավալների անկնան վրա՝ տ/տ 8.1%, ճյուղի ավելացված արժեքի նվազումը նույն ժամանակահատվածի համար գնահատվում է տ/տ 13-15%: Ընդ որում, բացառությամբ բնակչության (31.6% աճ) և մարդասիրական օգնության (11.7% աճ) միջոցների հաշվին իրականացված շինարարության, նվազում է արձանագրվել մյուս բոլոր աղբյուրներից ֆինանսավորվող շինարարության ծավալներում: Մասնավորապես՝ նվազել են կազմակերպությունների (22.5% նվազում), միջազգային վարկերի (9.6% նվազում), պետական բյուջեի (6.8% նվազում) և համայնքների (46.1% նվազում) միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները:


Ծառայությունների ոլորտում 2013 թ. հունվար-դեկտեմբերի ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 5-5.5%, ինչը մատուցված ծառայությունների և առևտուրի ծավալների համապատասխանաբար 3.6% և 1.2% աճի արդյունք է: Ընդ որում, մատուցված ծառայությունների ծավալի աճին մեծ նպաստում է ունեցել տեղեկատվության և կապի (10.2%), ֆինանսական և ապահովագրական գործունեության (9.5%), մշակույթի, զվարճության և հանգստի (15.6%), հանրային սննդի (18.6%) և առողջապահության (13.3%) ոլորտներում արձանագրված աճը: Առևտուրի ոլորտի աճը հիմնականում պայմանավորվել է մանրածախ և մեծածախ առևտուրի շրջանառության ծավալների համապատասխանաբար 1% և 3.2% աճով:

Գյուղատնտեսության ճյուղում 2013 թ. հունվար-դեկտեմբերի ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 6.5-7.5%, ինչը արդյունք է անասնապահության, ձկնաբուծության և բուսաբուծության համապատասխանաբար 7.8%, 30.4% և 6.6% աճի: Ընդ որում, անասնապահության ենթաճյուղի ցուցանիշը ամբողջությամբ արդյունք է կաթի, սպանդի համար իրացված անսունի և թռչնի արտադրության ծավալների համապատասխանաբար 6.3% և 12.7% աճի:

¹⁷ Տես համախառն պահանջարկ հատվածը:

¹⁸ Սննդամբերի արտադրության աճն արձանագրվել է հիմնականում բուսական յուղի (75.1%), մակարոնների (15.4%), պահածոների (8%), հողաշալերների (14.6%), մնի (9.9%), մսի կիսապատրաստուկների (27%), կաթնաշոռի (19%), մածունի (13%), կարի (6.2%), թթվասերի (1.5%) և պաղպաղակի (13.6%) արտադրության ծավալների աճի հաշվին:

¹⁹ Խմիչքների արտադրության աճն արձանագրվել է հիմնականում շամպայնի (12%), գինու (12.3%), գարեջորի (45.2%), կոնյակի (9.6%), բնական հյութերի (16.7%), ալյուրի ջրերի (33.3%), հանքային ջրի (31.0%) և ոչ ալկոհոլային ըմպելիքների (36.2%) արտադրության ծավալների աճի հաշվին:



Բուսաբուծության ենթաճյուղում արձանագրված ցուցանիշը պայմանավորվել է հացահատիկի և հատիկաբնդեղենի (20.3%), կարտոֆիլի (2.1%), բանջարեղենի (3.2%), բռստանի (1.5%) և պտղի, հատապտղի (1.9%) աճով:

3.2.2. Համախառն պահանջարկ²⁰

2013 թվականի չորրորդ եռամյակում պահպանվել է տարվա ընթացքում արձանագրված մասնավոր սպառման ցածր աճի միտումը՝ կազմելով 1.8%: Այդ պայմաններում մասնավոր սպառման տարեկան աճի ցուցանիշը կազմել է 1.8%, ինչն էականորեն ցածր է 2012 թվականին արձանագրված մասնավոր սպառման 9% աճից:

Նախորդ տարվա համեմատ մասնավոր սպառման ցածր աճի պատճառ են դարձել գյուղատնտեսության ոլորտում 2012 թվականին արձանագրված մեծ աճի ազդեցության աստիճանական վերացումը, վարկավորման ծավալների աճի տեմպերի դանդաղումը և տարվա երկրորդ կիսամյակում գազի և էլեկտրաէներգիայի սակագների աճով պայմանավորված գնաճը: Մասնավորապես՝ գազի և էլեկտրաէներգիայի սակագների աճով պայմանավորված բարձր գնաճային միջավայրը, սահմանափակ եկամուտների պայմաններում, բնականաբար, բացասաբար է անդրադարձել բնակչության իրական եկամուտների վրա և կրծատել է մասնավոր հատվածի սպառմանն ուղղված ծախսումները:

Սասնավոր սպառման ներկայացված զարգացումների մասին է վկայում նաև ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող՝ սպառողների վստահության ցուցանիշի վարքագիծը²¹: Այսպես, 2013 թվականի չորրորդ եռամյակում սպառողների վստահության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7.8%-ով և կազմել 40.9՝ վկայելով սպառման աճի ցածր տեմպերի մասին 2013 թվականի չորրորդ եռամյակում:

2013 թ. չորրորդ եռամյակում ներդրումային միջավայրը գիծել է կանխատեսվածիմ՝ հիմնականում պայմանավորված շինարարության ոլորտում թողարկման ծավալների նվազման միտման պահպանմամբ և սպասվածից ավելի ցածր տնտեսական ակտիվությամբ: Չորրորդ եռամյակում ներդրումների նվազումը կազմել է 13.7%, որի պարագայում հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում մասնավոր ներդրումների նվազումը կազմել է 13.1%:

Չորրորդ եռամյակում ներդրումային ցածր ակտիվության մասին են վկայում նաև ձեռնարկությունների շրջանում ներդրումների վերաբերյալ ՀՀ ԿԲ հարցման արդյունքները²²:

Այսպես, 2013 թվականի չորրորդ եռամյակում ներդրումներ են իրականացրել հարցված ձեռնարկությունների 23%-ը, ինչը 3 տոկոսային կետով պակաս է նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատ: Ընդ որում, ներդրումներ իրականացրած ձեռնարկությունների տեսակարար կշիռը ընդհանուր հարցված ձեռնարկությունների մեջ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է տնտեսության բոլոր ոլորտներում, բացի արդյունաբերությունից: Ինչ վերաբերում է արդյունաբերության ոլորտին, ապա այստեղ ներդրումներ իրականացրած ձեռնարկությունների տեսա-

²⁰ Մասնավոր ժախառումների, մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների 2013 թվականի չորրորդ եռամյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված 2013 թվականի երրորդ եռամյակի փաստացի տվյալների վրա: Ենթարածմում ներկայացված աճի գնահատումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մկանամբ են, եթե այլ բան նշված չէ:

²¹ <https://www.cba.am/am/SitePages/statsscci.aspx>

²² <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>

2013 թ. մասնավոր սպառման տարեկան աճի ցուցանիշը կազմել է 1.8%:

2013 թ. մասնավոր ներդրումների նվազումը կազմել է 13.1%:

Մասնավոր սպառման և ներդրումների տ/տ աճ



■ Մասնավոր սպառման աճ ■ Մասնավոր ներդրումների տ/տ աճ

կարար կշիռը 2013 թվականի չորրորդ եռամսյակում կազմել է 32%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցելով 2 տոկոսային կետով:

2013 թվականի չորրորդ եռամսյակում շարունակել են ներդրումների ֆինանսավորման կարևոր աղբյուր ծառայել տեղական բանկերից ձեռնարկություններին տրամադրվող վարկային միջոցները:

Մասնավոր սպառման աճի տեմպերի դանդաղման և ներդրումների նվազման պայմաններում, 2013 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 2.2%-ով, ինչը պետական ծախսումների 2.5% աճի պայմաններում հանգեցրել է ներքին պահանջարկի 1.6%-ով նվազման: Արդյունքում, 2013 թվականին մասնավոր ծախսումները նվազել են 1%-ով, ինչը պետական ծախսերի 6.4% աճի պարագայում հանգեցրել է ներքին պահանջարկի՝ նախորդ տարվա համեմատ անփոփոխ նակարդակի:

Մասնավոր սպառման և ներդրումների վերը նկարագրված միտումների ներքո 2013 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր հատվածի ծախսումների ճնշումը գնահատվում է նշանակալի բացասական և գնաճի վրա ունեցել է 0.9 – 1.0 տոկոսային կետ զապող ազդեցություն:

2013 թ. չորրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների իրական արտահանման աճի տեմպերը դանդաղել են և կազմել տ/տ 6.0%, ինչը պայմանավորվել է նշակող արդյունաբերության ճյուղում աճի տեմպերի որոշակի դանդաղմամբ: Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական²³ ծավալների աճի տեմպերն արագացել են և կազմել տ/տ 6.9%:

Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի աճի բարձր տեմպերը պահպանվել են 2013 թ. չորրորդ եռամսյակում և կազմել տ/տ 11.3%:

3.2.3. Աշխատանքի շուկա²⁴

2013 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների փաստացի օգրգացումները նախանշում են, որ 2013 թվականի չորրորդ եռամսյակում անվանական աշխատավարձի աճի տեմպը եղել է նախորդ կանխատեսումներին համահունչ և գնահատվում է 6.9%, որի պայմաններում հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում անվանական աշխատավարձի աճը կազմել է 6.5%: Ընդ որում, մասնավոր հատվածում աշխատավարձերի աճը պետական հատվածի համեմատ նշանակալիորեն բարձր է եղել: Այսպես. 2013 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր հատվածում աշխատավարձի աճը գնահատվում է 8.6%, իսկ պետական հատվածում՝ 5.8%:

2013 թվականին, մասնավորապես չորրորդ եռամսյակում, մասնավոր հատվածում անվանական աշխատավարձերի աճին նպաստել են տարվա ընթացքում նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացումը և գործազրկության նակարդակի նվազումը:


²³ Արտահանման և ներմուծման իրական աճի ցուցանիշները 77 ԿԲ գնահատական մերն են.

²⁴ Աշխատանքի շուկայի՝ 2013 թվականի տվյալները 77 ԿԲ գնահատումներն են՝ հիմնաքած 2013 թվականի երրորդ եռամսյակի և 2013 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների փաստացի ցուցանիշների վրա: Ենթաքամում ներկայացված աճի գնահատականները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բառը նշված չէ:


2013 թվականի երրորդ եռամսյակում գործազրկության մակարդակը, ԿԲ կանխատեսումներին համահունչ, նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել 15.4%: Այս պայմաններում 2013 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում գործազրկության միջին մակարդակը գնահատվում է 15.8%, որը 1.5 տոկոսային կետով զհցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Այս զարգացումների պարագայում 2013 թվականի չորրորդ եռամսյակում աշխատանքի շուկայում եական անհավասարակշռություններ չեն արձանագրվել: Նշված ժամանակահատվածում աշխատանքի շուկայի ազդեցությունը գնաճի վրա եղել է չեզոք:


2013 թվականի չորրորդ եռամսյակում հարկաբյուջեային քաղաքականության ընդլայնող ազդեցությունը պայմանավորված է ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսների ընդլայնող ազդեցություններով



Համախմբված բյուջեի հիմնական ցուցանիշների շարժը



ՀՀ բյուջեի ծախսների մեջ 2013 թ. չորրորդ եռամսյակում աճ է արձանագրվել գրեթե բոլոր ծախսային հոդվածների գծով



3.2.4. Հարկաբյուջեային քաղաքականություն²⁵

2013 թվականի չորրորդ եռամսյակում, ի տարբերություն տարվա նախորդ երեք եռամսյակների, պետական բյուջեի կատարումն ընթացել է հարկային եկամուտների ավելի փոքր աճի ապահովմամբ և ավելի մեծ ծախսների կատարմամբ: Արդյունքում՝ հարկաբյուջեային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կանխատեսվածի համեմատ ունեցել է փոքր-ինչ ավելի ընդլայնող ազդեցություն: հարկաբյուջեային ազդակի ցուցանիշը կազմել է 2.5 ընդլայնող՝ կանխատեսված 2.2-ի փոխարեն: Ընդ որում, ինչպես և կանխատեսված էր, ընդլայնող ազդեցությունը դրսնորվել է և եկամուտների, և ծախսների մասով:


Նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ համախմբված բյուջեի եկամուտներն ավելացել են 4.6%-ով, ընդ որում՝ հարկային եկամուտների աճը կազմել է 3.7%: Հարկային եկամուտների մեջ, նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ, 5 տոկոսային կետով նվազել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով հարկային եկամուտների 49%-ը, և 4 տոկոսային կետով ավելացել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով 42%-ը: Ուղղակի հարկերի մեջ եկամտային հարկի²⁶ աճը կազմել է 14.5%: Արդյունքում՝ ուղղակի հարկերի տ/տ աճը կազմել է 14%, իսկ անուղղակի հարկերի տ/տ նվազումը՝ 6%:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, չորրորդ եռամսյակում ծախսների բոլոր հոդվածներով արձանագրվել է աճ, ինչի արդյունքում ընդհանուր ծախսների աճը կազմել է 6.5%: Ընթացիկ ծախսները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 10.7%-ով, որտեղ՝ պետական սպառումն աճել է 10.4%-ով: Իսկ «*Ոչ ֆինանսավաճակ ակտիվների հետ գործառնություններ*» հոդվածի գծով կամ կապիտալ ծախսների նվազումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 11.1%: Չորրորդ եռամսյակում ծախսների մակարդակը կազմել է տարեկան ծախսների շուրջ 31.3%-ը, ինչը գերազանցում է եռամսյակային հա-

²⁵ Հարկաբյուջեային հատվածի վերլուծությունը կատարվել է ըստ չորրորդ եռամսյակի մախնական փաստացի ցուցանիշների հիմնա վրա (ներարյալ Ծիգ-երի միջոցները) կազմված համախմբված բյուջեի նախարար փաստացի ցուցանիշների: Ընդ որում, եկամուտների ազդեցությունը հաշվարկվել է կամխատեսված ՀՆԱ ամվաճական ցուցանիշի, իսկ ծախսների ազդեցությունը՝ գնահատված պոտենցիալ ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ:


²⁶ Պայմանապետրված 2013 թվականից հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությամբ՝ մեկ միասնական եկամտային հարկի մերժմամբ (նախկին եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարմերի փոխարեն) ստացված մուտքերի աճով՝ որոշ չափով է՝ նշված հարկատեսակների գծով նախորդ տարվա պարտավորությունների ընթացիկ տարում մուտքագրմամբ:

2013 թ. չորրորդ եռամսյակում, ի տարբերություն տարվա նախորդ եռամսյակների, ձևավորվել է բյուջեի պակասուրդ (մլն դր. դրամ):



Տարվա արդյունքում հարկարյութնուային քաղաքականությունը համախառ պահանջարկի վրա ունեցել է 1.2 զսպող ազդեցություն:

Կարճաժամկետ տոկոսադրույքները եռամսյակի ընթացքում նվազել են



մամասնություններով նախատեսված ցուցանիշը (նախորդ եռամսյակում տնտեսված ծախսերի որոշ մասը իրականացվել է հաշվետու եռամսյակում): Սակայն արտաքին ֆինանսավորմանը իրականացվող ծախսերի մասով արձանագրվել են թերստացումներ՝ պայմանավորված հիմնականում «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի իրականացման դաշտադարձը ընթացքու: Չորրորդ եռամսյակում պետական ծախսերը (ներառյալ զուտ վարկավորումը) համախառ պահանջարկի վրա ունեցել են 1.6 ընդլայնող ազդեցություն:

Եկամուտների և ծախսերի վերը նշված զարգացումները չորրորդ եռամսյակում ծևավորվել են 48.3 մլրդ դրամ բյուջեի պակասուրդ:

Ընդ որում, պակասուրդը ֆինանսավորվել է առավելապես արտաքին աղբյուրների հաշվին, որտեղ հատկանշական է 279.9 մլրդ դրամ²⁷ արտարժույթով պետական պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված մուտքը:

Ընդհանուր առմանը, **տարվա արդյունքում** պետական բյուջեի²⁸ եկամուտները կազմել են 1037.5 մլրդ դրամ, ինչը 0.5 տոկոսով գերազանցել է օրենքով հաստատված ցուցանիշը: Ընդ որում, հարկային եկամուտները կազմել են 999.5 մլրդ դրամ՝ գերակատարվել են 6.4 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 13.8% կամ 121.1 մլրդ դրամ պայմանավորված հիմնականում ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների աճով: Պետական ծախսերի (ԾԻԳ-երի միջոցները ներառյալ) աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 6.4%:

Տարվա արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառ պահանջարկի վրա ունեցել է 1.2 զսպող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների 1.6 զսպող և ծախսերի 0.4 ընդլայնող ազդեցություններով:

3.3. Փող և ֆինանսական շուկա, փող և վարկ

3.3.1. Ֆինանսական շուկա, փող և վարկ

2013 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում գնաճի նվազող վարքագիծին և տնտեսական աճի տեսնպերի դաշտադարձը կը խորհուրդը արձագանքել է դրամավարկային պայմանների աստիճանական մեղմացմանը՝ վերաֆինանսավորման տոկոսադրույթը նոյեմբերին իշեցնելով 0.5 տոկոսային կետով, իսկ դեկտեմբերի վերջին՝ 0.25 տոկոսային կետով՝ համապատասխանաբար սահմանելով 8.0% և 7.75%:


Քաղաքականության տոկոսադրույթի իջեցմանը զուգընթաց նվազել է նաև կը հիմնական գործիք՝ ռեպո համաձայնագրերի տոկոսադրույթը. դեկտեմբերի միջին տոկոսադրույթը սեպտեմբերի համեմատ նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել 8.0%:

²⁷ Նշված մուտքից 195.7 մլրդ դրամը հատկացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությամբ և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2009 թ. «Հայաստանի Հանրապետությանը պետական վարկ տրամադրելու նախն» համաձայնագրի շրջանակներում տրամադրված վարկի գծով առկա պարտի ամբողջական մարմարը:


²⁸ Առանց արտարյուջետային միջոցների հաշվառման:

ԺՐ ԿԲ Կողմից իրականացված գործառնությունները	Ուեպո (մինչև 7 օր)	Ներգրավված միջոցներ		Լոմբարդային ռեպո	
		Ծավալ (մլն դրամ)	Միջին կշռված %	Ծավալ (մլն դրամ)	Միջին կշռված %
I եռ. 2012 թ.	151932.32	11.15	387600	5.00	59093.88
II եռ.	185000.00	10.29	317950	5.05	179437.37
III եռ.	488921.68	9.03	158200	5.51	32524.98
IV եռ.	741880.51	8.09	140150	6.22	5631.79
I եռ. 2013 թ.	763825.90	8.09	163700	6.50	944.60
II եռ.	929077.62	8.19	176300	6.50	38652.30
III եռ.	1121106.19	8.42	176300	6.75	5278.56
IV եռ.	1064987.41	8.31	392300	6.71	500.00
					10.00


ՀՅ ԿԲ Կողմից իրականացված գործառնությունների ծավալները



Եռամսյակի ընթացքում կարճաժամկետ տոկոսադրույթները դրսկորել են նվազման միտում ԿԲ Վերաֆինանսավորման տոկոսադրույթի իշեցման պայմաններում



2013 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույթները նվազել են



Չորրորդ եռամսյակում ԿԲ Կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույթի փոփոխությունն ուղղեցվել է ֆինանսական շուկայի կարճաժամկետ տոկոսադրույթների աստիճանական նվազմանը: Ինչպես ԿԲ հիմնական գործիքի, այնպես էլ ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույթների նվազումն ավելի հստակ է արտացոլվել դեկտեմբերի միջին ցուցանիշներում: Բորսայական միջքամակային վարկերի (overnight) տոկոսադրույթների միջին եռամսյակային ցուցանիշը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.43 տոկոսային կետով, իսկ դեկտեմբերին միջին տոկոսադրույթը, սեպտեմբերի համեմատ, նվազել է 0.66 տոկոսային կետով և կազմել 7.74%: Միջքամակային ռեպո շուկայում դեկտեմբերին միջին տոկոսադրույթը, սեպտեմբերի համեմատ, նվազել է 0.56 տոկոսային կետով և կազմել 8.20% (միջին եռամսյակային ցուցանիշը նվազել է մոտ 0.1 տոկոսային կետով): Տոկոսադրույթների նվազման վարքագիծը դրսնորվել է նաև պետական կարճաժամկետ պարտատոմսերի շուկայում, որը, բացի ԿԲ քաղաքականության ազդակից, կրել է նաև ՀՅ ֆինանսների նախարարության կողմից պետական պարտի կառավարման քաղաքականության էական ազդեցությունը:

Ներգիր 2

Պետական պարտատոմսերի շուկա

ԿԲ Վերաֆինանսավորման տոկոսադրույթի փոփոխությամբ համապատասխանորեն արծագանքել են նաև պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույթները: ՊԿՊ միջին ամսական տոկոսադրույթների նվազմանը նպաստել է նաև պետական պարտի կառավարման ոլորտում վարկող քաղաքականությունը: Արդյունքում՝ մինչև մեկ տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի միջին եռամսյակային տոկոսադրույթը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 8.66%, իսկ դեկտեմբերի միջին տոկոսադրույթը սեպտեմբերի համեմատ՝ 0.83 տոկոսային կետով՝ կազմելով 8.22%:

Քաղաքականության տոկոսադրույթի իշեցումն արտացոլվել է եկամտաբերության կորերի մակարդակում: Երկրորդային շուկայում պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են կորի ողջ երկայնքով՝ առավել արտահայտվելով միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Ափոր եկամտաբերության կորի երկարաժամկետ տոկոսադրույթը նվազել է 4.8 տոկոսային կետով և կազմել 10.9%: Երկարաժամկետ և կարճաժամկետ տոկոսադրույթների տարբերությունը դեկտեմբերին կազմել է 2.98 տոկոսային կետ՝ սեպտեմբերի համեմատ նվազելով 3.86-ով:

2013 թ. չորրորդ եռամյակի ընթացքում բանկային համակարգում ավանդների և վարկերի տոկոսադրույթների ու ծավալների փոփոխությունները առավելապես կրել են 2013 թ. հունիսից պարուադիր պահուառալիրման նորմատիվի փոփոխության և ֆինանսական համակարգում մրցակցության ավելացման ազդեցությունները:


2013 թ. չորրորդ եռամյակի ընթացքում բանկային համակարգում ավանդների և վարկերի փոփոխությունները առավելապես կրել են 2013 թ. հունիսից պարուադիր պահուառալիրման նորմատիվի փոփոխության և ֆինանսական համակարգում մրցակցության ավելացման ազդեցությունները:

Արդյունքում ՀՀ դրամով ավանդների միջին եռամյակային տոկոսադրույթը նախորդ եռամյակի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 11.9%՝ շարունակելով դեռևս նախորդ եռամյակից դրսնորված աճի միտումը (դեկտեմբերին միջին տոկոսադրույթը սեպտեմբերի համեմատ աճել է 0.5 տոկոսային կետով): Զեավորված տոկոսադրույթների պայմաններում դրամային ավանդների ծավալները եռամյակի ընթացքում ավելացել են 14.5%-ով. աճը հիմնականում բաժին է ընկել ժամկետային դրամային ավանդներին:

Դրամով վարկավորման տոկոսադրույթը, բացի նշված փոփոխությունից, կրել է նաև վարկերի ծավալներում կառուցվածքային փոփոխության ազդեցությունը: ՀՀ դրամով վարկերի ընդհանուր ծավալում եռամյակի ընթացքում գերակշռել են նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ ավելի ցածր տոկոսադրույթով տրամադրված բիզնես-վարկերը՝ ի տարբերություն նախորդ եռամյակի, երբ գերակշռող էին սպառողական վարկերը, ինչն էլ հանգեցրել էր տոկոսադրույթների աճի: ՀՀ դրամով վարկավորման տոկոսադրույթների միջին եռամյակային մակարդակը նվազել է մոտ 0.1 տոկոսային կետով և կազմել 18.4%, իսկ դեկտեմբերին միջին տոկոսադրույթը սեպտեմբերի համեմատ նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել 17.8%: Չորրորդ եռամյակի ընթացքում նկատվել է վարկավորման աճի տեմպերի արագացում: Վարկավորման ծավալների աճը եռամյակի ընթացքում կազմել է 5.3% (տ/տ աճ՝ 16.4%), իսկ բացարձակ արտահայտությամբ՝ 99.3 մլրդ դրամ՝ նախորդ եռամյակի 39.7 (2.2%) մլրդ դրամի փոխարեն: Վարկավորման արժութային կառուցվածքում շարունակվել է նախորդ եռամյակում դրսնորված վարքագիծը, մասնավորապես՝ դրամով տրամադրված վարկերի ծավալների աճը գերազանցել է արտարժույթով տրամադրված վարկերի ծավալների աճը: Դրամով տրամադրված վարկերի ծավալների աճը կազմել է 8.0%:

Վարկավորման ծավալների և տոկոսադրույթների վարքագիծը համապատասխանել է նաև ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ 2013 թվականի չորրորդ եռամյակի հարցման արդյունքների՝ 2013 թ. չորրորդ եռամյակում արձանագրվել է յուրացման տեմպերի արագացում ինչպես փոքր և միջին ծեռնարկությունների, այնպես էլ խոշոր ծեռնարկությունների վարկավորման ընթացակարգերում, ի հակադրություն նախորդ եռամյակի, երբ նկատվել էր խոշոր ծեռնարկությունների վարկավորման ընթացակարգերի խստացում: Վարկերի տրամադրման պայմանների վերաբերյալ կատարված փոփոխություններով, մասնավորապես, էականորեն երկարացվել է տրամադրվող վարկի միջին ժամկետայնությունը: Երկարացվել են նաև այլ վարկատեսակների (հիփոթեքային և սպառողական) տրամադրման միջին ժամկետայնությունները: Զեռնարկությունը


ՀՀ դրամով և արտարժույթով միջոցների տոկոսադրույթների վարքագիծը




Ներգիր 3

Հստ ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ 2013 թվականի չորրորդ եռամյակի հարցման արդյունքների՝ 2013 թ. չորրորդ եռամյակում արձանագրվել է յուրացման տեմպերի արագացում ինչպես փոքր և միջին ծեռնարկությունների, այնպես էլ խոշոր ծեռնարկությունների վարկավորման ընթացակարգերում, ի հակադրություն նախորդ եռամյակի, երբ նկատվել էր խոշոր ծեռնարկությունների վարկավորման ընթացակարգերի խստացում: Վարկերի տրամադրման պայմանների վերաբերյալ կատարված փոփոխություններով, մասնավորապես, էականորեն երկարացվել է տրամադրվող վարկի միջին ժամկետայնությունը: Երկարացվել են նաև այլ վարկատեսակների (հիփոթեքային և սպառողական) տրամադրման միջին ժամկետայնությունները: Զեռնարկությունը


2013 թ. IV եռամսյակում ավելացել են միայն դրամային ավանդները, իսկ արտարժութային ավանդները մնացել են գրեթե անփոփոխ




2013 թ. IV եռամսյակում վարկավորման ընդհանուր ծավալում գերակշռել են արտարժութային վարկերը, սակայն դրամով վարկերի աճը գերազանցել է արտարժութային վարկերի աճը



Արձանագրվել է առաջարկը խթանող վարկերի կշռի աճ



Զորորոր եռամսյակում ՀՀ դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույթների տարբերությունը նվազել է



Ներին տրամադրվող վարկերի պահանջարկն էապես աճել է երրորդ եռամսյակի անկման փոխարեն, ընդ որում արավելապես աճել է կապիտալ մերրումների, շրջանառու միջոցների և շրջանառու կապիտալի ֆինանսավորման նպատակով վարկերի պահանջարկը: Չորրորդ եռամսյակում նկատվել են տնային տնտեսությունների (սպառողական և հիփոթեքային վարկեր) վարկավորման ընթացակարգերի և տրամադրման պայմանների դյուրացումներ: Մասնավորապես, ընթացակարգերի դյուրացման տեմպերի ած է արձանագրվել հիփոթեքային վարկերի տրամադրման գործմքացում՝ ի հակադրություն երրորդ եռամսյակի դյուրացման տեմպերի դամդաղման: Հարուսակել են աճել սպառողական վարկերի վարկավորման ընթացակարգերի դյուրացման տեմպերը, սակայն արձանագրվել է պահանջարկի կրծառում պայմանավորված տնային տնտեսությունների վարկունակության նվազմամբ: Հիփոթեքային վարկերի պահանջարկը մնացել է անփոփոխ: 2014 թ. առաջն եռամսյակի համար սպասավում է բոլոր վարչատեսակների վարկավորման ընթացակարգերի դյուրացման տեմպերի ած և սպառողական վարկերի պահանջարկի ած, սակայն, 2013 թ. չորրորդ եռամսյակի աճի համեմատ, ծեռնարկություններին տրամադրվող վարկերի և հիփոթեքային վարկերի պահանջարկի աճի տեմպերի նվազում:

Վարկավորման պայմանների վրա բարեմպաստ ազդեցություն կրող մասնակի բետրվարից դրամով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման սահմանաշափի նվազեցումը 4%-ից 2%-ի, ինչի արդյունքում ֆինանսական համակարգում իրացվելիությունը կավելանա շուրջ 10 մլրդ դրամով:

Ի տարբերություն դրամային միջոցների տոկոսադրույթների և ծավալների, արտարժութային ավանդների տոկոսադրույթները եռամսյակի ընթացքում նվազել են 0.8 տոկոսային կետով և կազմել 6.8%՝ արտարժութային ավանդների ծավալների գրեթե անփոփոխ մակարդակի պայմաններում: Ծեռնարկություններից ներգրավված ավանդների աճը: Արտարժութային վարկավորման պայմանավորված վարկերի տոկոսադրույթներն աճել են պայմանավորված եռամսյակի ընթացքում բիզնես-վարկերի նկատմամբ պահանջարկի աճով. միջին եռամսյակային տոկոսադրույթը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 0.5 տոկոսային կետով և կազմել 11.7%: Արտարժութային տրամադրված վարկերի ծավալների աճը կազմել է 3.16% (բացառելով վիճակարգեցված փոփոխության ազդեցությունը՝ 3.07%):

Ընդ որում, ըստ ոլորտների տրամադրված վարկերի, չնայած դանդաղ տեմպերով, սակայն վարկավորման պորտֆելում աճում է առաջարկը խթանող վարկերի կշռը:²⁹

ՀՀ դրամով և արտարժութային վարկերի ու ավանդների տոկոսադրույթների միջև տարբերությունները 2013 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում պահպանել են նախորդ տարիներին արձանագրված նվազման միտումը: ՀՀ դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույթների տարբերությունը նախորդ եռամսյակի ընթացքում նվազել է սեպտեմբերի 7.3 տոկոսային կետից դեկտեմբերին հասնելով 5.9 տոկոսային կետի, մինչդեռ, արտարժութային ավանդների տոկոսադրույթների նվազմանը պայմանավորված, արտարժութային վարկերի և ավանդների տոկոսադրույթների տարբերությունն աճել է և դեկտեմբերին կազմել 4.5 տոկոսային կետ:

2013 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում արտարժութային ավանդների գրեթե անփոփոխ մակարդակը (անշան նվազում) իր արտացոլումն է գտնել տնտեսության դոլարայնացման ցուցանիշում: Եռամսյակի ընթացքում դոլարայնացման մակարդակը (արտարժութային ավանդների/փողի զանգված) նվազել է 2.73 տոկոսային կետով: Դոլարայնացման մակարդակի նվազման մասին է վկայում նաև արտարժութային վարկավորման ցուցանիշի վարդագիծը, որի աճի տեմպերը զիջել են դրամով վարկավորման աճի տեմպին:

²⁹ Որպես առաջարկը խթանող վարկեր՝ վարկավորման ընդհանուր կառուցվածքից պայմանականուն վերցվել են արդյունաբերության, գյուղատնտեսության, տրամադրտի և կապի ոլորտներին տրամադրված վարկերը:

Ներգիր 4

Ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի նշված զարգացումների մերը փողի զանգվածը չորրորդ եռամսյակում ավելացել է 6.0%-ով և կազմել 1.545 տրլն դրամ, իսկ դրամային զանգվածը՝ 11.6%-ով՝ կազմելով 848 մլրդ դրամ:


Դրամավարկային ցուցանիշների 12-ամյա միտումները հետևյալն են. 2013 թ. վերջին դրամային ավանդներն աճել են 31.0%-ով, արտարժութային ավանդները՝ 14.6%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ աճել են 14.0%-ով), որը համգեցրել է դոլարայնացման 0.1 կետով նվազման, ֆինանսական համակարգից դուրս շրջանառվող կանխիկի ծավալը մնացել է գրեթե անփոփոխ: Փողի և դրամային զանգվածների 12-ամյա աճները գրեթե համընկել են և համապատասխանաբար կազմել 14.8% և 14.9%: Փողի բազան աճել է 29.9%-ով, իսկ դրամային բազան՝ 8.6%-ով: Փողի և դրամային բազմարկշները՝ 2013 թվականի վերջին համապատասխանաբար կազմել են 1.74 և 1.31 մախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.97 և 1.23-ի փոխարեն:

3.3.2. Փոխարժեք

2013 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում առևտրային գործընկեր երկրների միջին կշռված փոխարժեքն արժենորվել է եռ/եռ 0.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորվել է եվրոյի և ոռւսական ուլուտ փոխարժեքների միջին եռամսյակային արժենորնամբ: ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժենորնան վարդագիծը չորրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել է: Նշված ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկը արժութային շուկայում հանդես է եկել որպես արտարժույթի գուտ գնորդ՝ հարթելով արժութային շուկայում կտրուկ տատանումները:

Նշված զարգացումների արդյունքում 2013 թ. չորրորդ եռամսյակում ՀՀ դրամի անվանական միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժենորվել է եռ/եռ 0.8%-ով, իսկ իրական փոխարժեքի³⁰ արժենորումը երրորդ եռամսյակի համեմատ կազմել է 0.4%: Իրական փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրել է արժենորնան բարձր տեմպեր՝ տ/տ 7.3%, ինչը իրանական ռիալի տ/տ արժեզրկման բարձր տեմպերի պայմաններում, պայմանավորվել է նաև գործընկեր երկրների համեմատ ՀՀ բարձր գնաճով:

2013 թ. չորրորդ եռամսյակում իրական արդյունավետ փոխարժեքի տ/տ արժենորնան տեմպերը որոշակի դանդաղել են, % (դրական նշան՝ արժենորում)



տ/տ աճ, %	I եռ. 12	II եռ. 12	III եռ. 12	IV եռ. 12	2012	I եռ. 13	II եռ. 13	III եռ. 13	IV եռ. 13
Իրական արդյունավետ փոխարժեք («+» արժենորում)	-3.8	-2.9	-5.1	-5.7	-4.4	-6.4	-1.6	7.9	7.3
ՀՀ միջին գնաճ	3.3	1.0	2.4	3.4	2.5	3.0	5.2	8.7	6.5
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական միջին փոխարժեք («+» արժենորում)	-5.7	-6.8	-10.2	-6.3	-7.3	-5.1	-3.3	0.5	0.2
Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված գնաճ	4.0	3.5	4.1	4.3	4.0	4.5	4.4	4.3	3.7
Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված անվանական փոխարժեք («+» արժենորում դոլարի նկատմամբ)	-2.9	-6.9	-7.6	-1.7	-4.7	-0.4	-1.1	-3.2	-4.4

Իրական փոխարժեքի արժենորում = ՀՀ գնաճ + ՀՀ անվանական փոխարժեքի արժենորում - Առևտրային գործընկեր երկրների միջին կշռված գնաճ - Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված անվանական փոխարժեքի արժենորում:


³⁰ Իրական փոխարժեքի 2013 թ. չորրորդ եռամսյակի ցուցանիշը ՀՀ ԿԲ գնահատականն է:

Փոխարժեք

ԱՄՆ դրամի նկատմամբ ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը 2013 թ. չորրորդ եռամյակի վերջին կազմել է 405.64 դրամ. նախորդ եռամյակի վերջի համեմատ դրամի արժեգրկումը կազմել է 0.09%: 2013 թվակամին ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը կազմել է 409.63 դրամ՝ արժեգրկելով նախորդ տարվա նկատմամբ 1.92%-ով:

2013 թ. չորրորդ եռամյակում ՀՀ դրամի վարքագիծը ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ

ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի շարժը մեկ տարվա ընթացքում



ՀՀ դրամի փոխարժեքի եռ./եռ. շարժը 2013 թ. չորրորդ եռամյակում			
Արժութային գույգ	Փոխարժեք 30.09.2013-ի դրությամբ (ՀՀ դրամ)	Փոխարժեք 30.12.2013-ի դրությամբ (ՀՀ դրամ)	% (արժևորում «+», արժեգրկում «-»)
USD/AMD	405.29	405.64	-0.09
EUR/AMD	546.82	559.54	-2.27
RUB/AMD	12.51	12.44	+0.56

ՀՀ դրամի միջին փոխարժեքի տ/տ շարժը 2013 թ. չորրորդ եռամյակում			
Արժութային գույգ	2012 թ. չորրորդ եռամյակի միջին փոխարժեք	2013 թ. չորրորդ եռամյակի միջին փոխարժեք	% (արժևորում «+», արժեգրկում «-»)
USD/AMD	406.45	405.48	+0.24
EUR/AMD	527.37	552.11	-4.48
RUB/AMD	13.09	12.46	+5.06

Եռամյակի ընթացքում արժութային շուկայում ԱՄՆ դոլար - ՀՀ դրամ գործառնությունների համախառն ծավալը կազմել է 2.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ եռամյակի համեմատ աճելով 8.0%-ով (2.5 մլրդ ԱՄՆ դոլար):

Արժութային շուկայում իրականացված եվրո - ՀՀ դրամ գործադրությունների համախառն ծավալը կազմել է 325.4 մլն եվրո՝ նախորդ եռամյակի 245.9 մլն եվրո³¹ ծավալի փոխարժեն:

2013 թ. չորրորդ եռամյակի ընթացքում արժութային շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի կտրուկ տատանումները մեղմելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկն առևտորային բանկերից գնել է 36.79 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2013 թվակամի ընթացքում գուտ առքը կազմել է 72.17 մլն ԱՄՆ դոլար:


3.4. Վճարային հաշվեկշիռ

2013 թ. չորրորդ եռամյակում ընթացիկ հաշվի պակասուրդի նվազման վարքագիծը փոխվեց պակասուրդի ավելացման՝ առավելապես պայմանավորված արտահանման նկատմամբ ներմուծման աճի առաջանցիկ տեմպերով: Կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների գուտ ներհուսքը նվազել է, ինչը հիմնականում պայմանավորվել է ստացումների նկատմամբ պետական հատվածի վարկերի մարումների գերազանցմամբ: Վճարային հաշվեկշիռի գարգացումների արդյունքում ՀՀ ԿԲ գուտ արտաքին ակտիվները նվազել են՝ պայմանավորված պետական պարտքի մեծածավալ մարման իրականացմամբ:


³¹ ճշգրտվել է 2013 թ. երրորդ եռամյակի եվրո - ՀՀ դրամ գործառնությունների 252.4 մլն եվրո ծավալը:

3.4.1. Ընթացիկ հաշիվ³²


Արտահանման տ/տ փոփոխությունը և հիմնական ապրանքախմբերի նպաստումը, %³²




Ներմուծման տ/տ փոփոխությունը և հիմնական ապրանքախմբերի նպաստումը, %



Արտահանման կառուցվածքը ըստ երկրների խմբերի



Ներմուծման կառուցվածքը ըստ երկրների խմբերի



3.4.1. Ընթացիկ հաշիվ³²

2013 թ. չորրորդ եռամյակում, ըստ գնահատումների, ընթացիկ հաշիվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նույն եռամյակի համեմատ ավելացել է 0.4 տոկոսային կետով: Եռամյակի ընթացրում համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնման և ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպերի փոքր-ինչ արագացման պայմաններում ընթացիկ հաշիվի պակասուրդը նախորդ տարվա նույն եռամյակի համեմատ ավելացել է 57.4 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 277.4 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ 2013 թ. համար ընթացիկ հաշիվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշի մակարդակը գնահատվում է 8.5-8.8%:

Մշակող արդյունաբերության ճյուղում աճի տեմպերի որոշակի դանդաղման պայմաններում ապրանքների արտահանման իրական ծավալների տ/տ աճի տեմպերը դանդաղել են: Արտահանման գների տ/տ նվազման տեմպերի արագացման պայմաններում ապրանքների արտահանման դրամականարար 2013 թ. չորրորդ եռամյակում ավելացել է ընդամենը տ/տ 1.6%-ով: 2013 թ. արդյունքներով գնահատվում է արտահանման դրամականարար 7.0% աճ:

2013 թ. չորրորդ եռամյակում արտահանման ապրանքախմբերում տեղի են ունեցել հետևյալ հիմնական զարգացումները. «Պատրաստի սննդի արտադրանք» և «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերն ունեցել են համապատասխանաբար 2.5 և 1.2 տոկոսային կետ դրական նպաստում: «Դանքահումքային արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանց պատրաստված իրեր» ապրանքախմբերն ունեցել են համապատասխանաբար 3.2 և 4.3 տոկոսային կետ բացասական նպաստում³⁴:

Չորրորդ եռամյակում ներքին տնտեսության ակտիվության աճի տեմպերի արագացման, իրական արդյունավետ փոխարժեքի արժեկորման պայմաններում արձանագրվել է ապրանքների ներմուծման իրական ծավալների աճի տեմպերի արագացում: Ներմուծման դրամական գների տ/տ աճի արդյունքում ապրանքների ներմուծման դրամական արժեքի արժեքի աճը 2013 թ. չորրորդ եռամյակում կազմել է տ/տ 10.3%, իսկ տարեկան առումով՝ 4.4% աճ:

Ներմուծման դրամական արժեքի տ/տ աճը 2013 թ. չորրորդ եռամյակում հիմնականում պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք», «Դանքահումքային արտադրանք» և «Թանկարժեք մետաղներ և դրանց պատրաստված իրեր» պատրաստ սմանի արտադրանք պատրաստված իրերը ապրանքախմբերի համապատասխանաբար 1.5, 3.6 և 2.8 տոկոսային կետ դրական նպաստումներով:

Արտահանման և ներմուծման իրական ծավալների փոփոխությունների և առևտության պայմանների վատացման արդյունքում առևտության պատրաստված իրերի գների տ/տ աճի արդյունքում ապրանքների ներմուծման դրամական արժեքի արժեքի աճը 2013 թ. չորրորդ եռամյակում կազմել է տ/տ 106.0 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 750.5 մլն ԱՄՆ դոլար:

Սառայությունների հաշվեկշռի պակասուրդը 2013 թ. չորրորդ եռամյակում պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք», «Դանքահումքային արտադրանք» և «Թանկարժեք մետաղներ և դրանց պատրաստված իրեր» պատրաստված իրերը ապրանքախմբերի համապատասխանաբար 1.5, 3.6 և 2.8 տոկոսային կետ դրական նպաստումներով:


Օսայությունների հաշվեկշռի պակասուրդը 2013 թ. չորրորդ եռամյակում ավելացել է տ/տ 9.0 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 109.0 մլն ԱՄՆ դոլար: Օսայությունների արտահանման և ներմուծման տ/տ աճը համապատասխանաբար կազմել է 5.1% և 6.3%:

³² 2013 թ. չորրորդ եռամյակի ընթացիկ հաշիվի ցուցանիշները ՀՀ ԿԲ կամիսատեսում մերու ու գնահատվածներու են:


³³ Արտահանման և ներմուծման ըստ ապրանքախմբերի և ըստ երկրների ցուցանիշները ներկայացված են համապատասխանաբար ՖՕԲ և Միջ գներով, իսկ ընթացիկ հաշիվի արտահանման և ներմուծման ցուցանիշները՝ համապատասխանաբար կրեդիտով և դեբետով:

³⁴ Դրական նպաստումներ են արձանագրվել մի շարք փոքր կշիռ ունեցող ապրանքախմբերի արտահանման մասով:

2013 թ. IV եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է:



2013 թ. IV եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների գուտ ներհոսքը նվազել է:



2013 թ. չորրորդ եռամսյակում ՀՀ հիմնական գործմնկեր նրկումներում արձանագրվել են տնտեսական ակտիվության վերականգնման միտումներ:

Տիգիկական անձանց դրամական փոխանցումների աճի բարձր տեմպերը պահպանվել են 2013 թ. չորրորդ եռամսյակում սեպտեմբերի գուտ ներհոսքն ավելացել է տ/տ 15.2%-ով և կազմել 481.6 մլն ԱՄՆ դոլար, ինչը բավականաչափ գերազանցել է «Եկամուտ ներդրումներից» հոդվածով գուտ արտահոսքի մակարդակը: Արդյունքում՝ «Եկամուտ» հոդվածով արձանագրվել է 325.7 մլն ԱՄՆ դոլարի գուտ ներհոսք: Մասնավոր տրանսֆերների գուտ ներհոսքը ընթացիկ եռամսյակում ավելացել է տ/տ 15.4%-ով և կազմել 237.7 մլն ԱՄՆ դոլար: Մասնավոր տրանսֆերների աճը 2013 թ. կազմել է 14.5%:

3.4.2. Կապիտալի և ֆինանսական հաշիվ³⁵

2013 թ. չորրորդ եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների գուտ ներհոսքը նվազել է տ/տ 243.3 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 148.4 մլն ԱՄՆ դոլար: Նվազումը հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանի պարտքի մարմար, ինչը գերազանցել է պետական հատվածի կողմից վարկերի ստացումները: Վճարային հաշվեկշիռի հոսքերի արդյունքում ՀՀ ԿԲ գուտ արտաքին ակտիվները նվազել են 129.0 մլն ԱՄՆ դոլարով: Չնայած չորրորդ եռամսյակում ֆինանսական գուտ ներհոսքի նվազմանը, 2013 թ. գնահատականներով՝ կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների գուտ ներհոսքը բավականին ավելացել է (հիմնականում պայմանավորված նախորդ եռամսյակում եվրոբռնդերի թողարկման հետ կապված ներհոսքով), ինչը հանգեցրել է ՀՀ ԿԲ գուտ արտաքին ակտիվների 560.8 մլն ԱՄՆ դոլարով աճ՝ 2012 թ. նկատմամբ:

Կապիտալ տրանսֆերների գուտ ներհոսքը 2013 թ. չորրորդ եռամսյակում կազմել է 24.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 30.1 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների գուտ ներհոսքը ընթացիկ եռամսյակում նվազել է տ/տ 32.3 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 132.8 մլն ԱՄՆ դոլար: Պետական վարկերի մասով մարումները (գերակշռող մասը Ռուսաստանի վարկի մարումն է) գերազանցել են ստացումները, որի արդյունքում արձանագրվել է 183.4 մլն ԱՄՆ դոլարի գուտ արտահոսք՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի 38.0 մլն ԱՄՆ դոլար գուտ ներհոսքի փոխարեն:

«Այլ ներդրումներ» հոդվածով գուտ ներհոսքը կազմել է 173.9 մլն ԱՄՆ դոլար: Այդ թվում՝ բանկերի գուտ արտաքին ակտիվները նվազել են 404.2 մլն ԱՄՆ դոլարով, իսկ «Այլ նամակար հատվածի» գուտ արտաքին ակտիվներն ավելացել են 230.3 մլն ԱՄՆ դոլարով:


3.5. Արտաքին միջավայր

2013 թ. չորրորդ եռամսյակում ՀՀ հիմնական գործմնկեր երկրներում արձանագրվել են տնտեսական ակտիվության վերականգնման միտումներ:


Ըստ ԱՄՆ առևտորի դեպարտամենտի տնտեսական վերլուծությունների բյուրոյի նախնական գնահատումներ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում 2013 թ. չորրորդ եռամսյակում գրանցվել է եռ/եռ տարեկանացված 3.2% տնտեսական աճ (տ/տ աճը չորրորդ եռամսյակում կազմել է 2.7%), ընդ որում՝ տնտեսական աճին դրական նպաստում են ունեցել նաև ազգային ծախսումները, ներդրումներն ու գուտ արտահանումը, իսկ պետական ծախսումներն ունեցել են բա-

³⁵ 2013 թ. չորրորդ եռամսյակի կապիտալի և ֆինանսական հաշվի ցուցամիջոցները ՀՀ ԿԲ կամխատեսումներն ու գնահատականներն են:

2013 թ. չորրորդ եռամսյակում ԱՄՆ-ում
տնտեսական աճն արագացել է



2013 թ. չորրորդ եռամսյակում Եվրոգոտում
արձանագրվել է դրական տնտեսական աճ



ցասական նպաստում: **2013 թ. չորրորդ եռամսյակում ԱՄՆ-ում արձանագրված միջին եռամսյակային գնաճը կազմել է տ/տ 1.2%՝ նախորդ եռամսյակի 1.6%-ի փոխարեն:**

Այսպիսով՝ 2013 թ. ԱՄՆ տնտեսական աճը գնահատվում է մոտ 1.9%, իսկ գնաճը՝ 1.5%:

Համաձայն Եվրոպատարի նախնական գնահատականների՝ Եվրոգոտում 2013 թ. չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է 0.5% տնտեսական աճ: Ընդհանուր առնամբ՝ 2013 թ. տնտեսական անկումը Եվրոգոտում կազմել է մոտ 0.4%՝ նախորդ տարվա 0.7%-ի փոխարեն: Միաժամանակ, սպառողական գների ինդեքսը 2013 թ. չորրորդ եռամսյակում միջինում գրանցել է տ/տ 0.8% աճ՝ նախորդ եռամսյակի 1.3%-ի փոխարեն:

Եվրոպական կենտրոնական բանկը չորրորդ եռամսյակում քաղաքանության տոկոսադրույթը նվազեցրել է՝ հասցնելով 0.25%-ի:

2013 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Եվրոն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 2.8%-ով (տ/տ արժևորումը՝ 4.9%), և ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 1.36՝ մեկ Եվրոյի դիմաց:

Ուստաստանի պետական վիճակագրական ծառայության նախնական գնահատումների համաձայն, տնտեսական աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 1.3%, ընդ որում ճյուղային զարգացումներում դրսարժակ են հետևյալ միտումները. արդյունաբերության ճյուղում գրանցվել է 0.3% աճ՝ նախորդ եռամսյակի գրոյական աճի փոխարեն: Մանրածախ առևտորի և գյուղատնտեսության ճյուղում աճի տեմպերը համապատասխանաբար կազմել են տ/տ 4% և տ/տ 14.8%³⁶: Միաժամանակ, շինարարության ճյուղում չորրորդ եռամսյակում արձանագրվել է 2.4% անկում: Սպառողական գների աճը չորրորդ եռամսյակում, երրորդի համեմատ, մնացել է նույնը՝ կազմելով տ/տ 6.4%: 2013 թ. Ուստաստանի տնտեսական աճը գնահատվում է մոտ 1.3%, գնաճը՝ 6.8%:

2013 թ. չորրորդ եռամսյակում «Intercontinental Exchange» (ICE) բորսայում գնանշվող «Բրենթ» տեսակի **հում նավթի գինը** նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.6%-ով՝ միջինում մեկ բարելի դիմաց կազմելով մոտ 109 ԱՄՆ դոլար (տ/տ անկում՝ 0.9%): Արդյունաբերական մետաղներից Լոնդոնի մետաղների բորսայում գնանշվող **պղնձի գինը** 2013 թ. չորրորդ եռամսյակում աճել է 1%-ով՝ տոննայի դիմաց միջինում կազմելով 7170 ԱՄՆ դոլար (տ/տ 9% նվազում):

Ըստ ԱՄՆ գյուղեպարտամենտի՝ կոչտ կարմրահատ **ցորենի** արտահանման գինը չորրորդ եռամսյակում աճել է եր/եր 1.7%-ով՝ մեկ բուշելի դիմաց միջինում կազմելով 8.5 ԱՄՆ դոլար (տ/տ անկում՝ 12.5%):

«New York Board-Intercontinental Exchange» (NYB-ICE) բորսայում գնանշվող անմշակ շաքարավագի գնի ինդեքսը 2013 թ. չորրորդ եռամսյակում արձանագրել է 6% աճ (տ/տ անկում՝ 9.8%): «Chicago Board of Trade» (CBOT) ապրանքահումքային բորսայում գնանշվող **բրոնձի գինը** չորրորդ եռամսյակում աճել է 0.2%-ով և միջին գինը մեկ ամերիկյան ցենտների (45.4 կգ) համար կազմել է 15.6 ԱՄՆ դոլար (տ/տ 1.3% աճ):

Այսպիսով, համաշխարհային պահանջարկի վերականգնմանը զուգընթաց, հումքային ապրանքների շուկաներում էական գնաճային միտումներ չեն նկատվել: Թեև պարենային ապրանքները չորրորդ եռամսյակում միջին հաշվով արձանագրել են որոշակի գնաճային զարգացումներ, եռամսյակի վերջում պարենային ապրանքների շուկաներում նկատվել են որոշակի գնաճումային միտումներ:

Համաշխարհային պահանջարկի վերականգնմանը զուգընթաց, հումքային ապրանքների շուկաներում էական գնաճային միտումներ չեն նկատվել, իսկ պարենային ապրանքների շուկաներում եռամսյակի վերջում արձանագրվել են որոշակի գնաճումային միտումներ:

³⁶ Գյուղատնտեսության ճյուղում արձանագրված բարձր տնտեսական աճը գերազանցական է նախորդ տարվա ցածր բազայի աղեցությունը:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

Արտաքին հատվածում 2013 թվականի չորրորդ եռամսյակում համաշխարհային պահանջարկը շարունակել է մնալ ցածր, և հիմնական հումքային ու պարենային ապրանքների միջազգային շուկաներում գնաճային միտումներ չեն նկատվել: **Կանխատեսվող հորիզոնական ակնկալվում** է համաշխարհային տնտեսական աճի տեմպերի դանդաղ վերականգնում, որի պայմաններում հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում գնաճային ճնշումներ չեն սպասվում: Այսպիսով, **Կանխատեսվող հորիզոնական արտաքին հատվածից ակնկալվում է ոչ գնաճային ազդեցություն:**

2013 թ. չորրորդ եռամսյակում դիտվել է տնտեսական ակտիվության որոշ չափով վերականգնում և գնաճային միջավայրի գգալի մեղմում, այդուհանդերձ, **տնտեսական աճը** սպասվածից ցածր է եղել՝ 3.3-3.6%, իսկ **12-ամյա գնաճը** գտնվել է իր տատանումների բույլատրելի միջակայքի վերին սահմանին մոտ՝ կազմելով 5.6%:

Կանխատեսվող հորիզոնական արտաքին հատվածում է հրական սպառնան աճի տեմպերի կայունացում և մասնավոր ներդրումների՝ դանդաղ տեմպում վերականգնում, ինչի պայմաններում տնտեսական աճը կմուտենա իր հավասարակշիռ մակարդակին: Ընդ որում, 2013 թ. հարկաբույժետային քաղաքականության օսպողական բնույթին 2014 թ. կիաջորդի ընդլայնողականը, որը եականորեն կնպաստի տնտեսական աճի տեմպերի արագացմանը և գնաճային միջավայրի ընդլայնմանը: **Միջնաժամկետ հատվածում** նաև սպասվող պահանջարկի աշխուժացման և չեզոք հարկաբույժետային քաղաքականության իրականացման արդյունքում **կանխատեսվող հորիզոնական աճը** պահանջարկի առումով գների վրա ակնկալվում է ոչ գնաճային ազդեցություն:

Կանխատեսվող հորիզոնական աճը կայունանա իր նպատակային 4% մակարդակի շուրջ: **Այդուհանդերձ, 2014 թ. գնաճը շարունակելու է նվազել՝** տարվա երրորդ եռամսյակում գտնվելով տատանումների բույլատրելի միջակայքի ստորին սահմանին մոտ, իսկ տարեկան կրկին կաճի՝ մոտենալով նպատակային ցուցանիշին: Այդ իրավիճակում **2014 թ. առաջին եռամյակում ԿԲ-ը կշարունակի թուլացմել դրամավարկային պայմանները՝ արծագանքելով դեռևս պահպանվող ցածր տնտեսական ակտիվությանն ու գնաճային միջավայրի մեղմնանը,** իսկ **ԿԲ դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունները մեծապես կպայմանավորվեն արտաքին ու ներքին տնտեսական գարգացման առկա անորոշությունների դրսևորումներով:**

Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում գնահատվում են հավասարակշռված: Ընդ որում, հիմնական ռիսկերը կապված են զարգացող երկրների տնտեսական զարգացումների հեռանկարների և ներքին պահանջարկի զարգացումների հետ, որոնց արդյունքում գնաճի կանխատեսված արժեքի շուրջ անորոշությունները պահպանվել են: Նման ռիսկերի դրսևորման պարագայում կենտրոնական բանկը կարծագանքի համապատասխան քաղաքականությամբ՝ պահպանվելով գնաճի նպատակային մակարդակը միջնժամկետ հատվածում: